

Գևորգ Ա. Ճաղարյան

ԹՈՄԱՍ ԲԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «Ի ՎԵՐԱՅ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈԳՎԱԾԸ\*

«Որքան մեծ է նա:

Առաջին անգամ նա պատմությունը  
երգեցողություն դարձրեց մեր լեզվով:  
Նա մեր անգլիական Տակիտունն է»<sup>1</sup>:

*Օսկար Ուայլդ*

**Բանալի բառեր** - Վիկտորիանական դարաշրջան, Թոմաս Բարլայ, պատմագիտություն, **Պրուսական** դպրոց, Վ. Սքոթ, Գ. Վ. Ֆ. Հեգել, Ժ. Միշլե, **ռոմանտիկական** պատմագրություն, գերմանական **ռոմանտիզմ**, **լուսավորական** պատմագրություն, անցյալատեսություն, պատմական զգացողություն:

**Վիկտորիանական դարաշրջանը** (1837-1901) Մեծ Բրիտանիայի պատմության մեջ դիտվում է իբրև անցման/անցումայնության շրջան<sup>2</sup>, որը հիմնարար և համապարփակ հղացք է տվյալ ժամանակաշրջանի և նրա աշխարհատեսության ընկալման հարցում: Դարաշրջան, երբ վիթխարի տեղաշարժեր էին ընթանում սոցիալ-տնտեսական կյանքում. ավատատիրական և ագրարային կարգերի վերջին մնացորդներն իրենց տեղը գիշում էին ժողովրդավարական և արդյունաբերական հասարակության նոր կառույցին ու արժեհամակարգին:

Հստակ ուրվագծվում էր միջին դասի հասարակական-քաղաքական հարաճուն ազդեցությունը: Վիկտորիանական մտակերտվածքը (frame of mind) առավելապես կազմված էր հենց միջին դասի հոգեմտավոր աշխարհի հատկանշական կաղապարներից:

Ահագնացող թափով մեկնարկեց արտադրական և հաղորդակցության նոր միջոցների ստեղծումն ու գործարկումը, որոնք էապես փոխեցին հասարակության ժամանակի և տարածության զգացողությունը: Այս ամենի հետնախորքին հետզհետե տիրապետող էր դառնում գիտական գիտելիքը: Նեղ մասնագիտաց-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.05.2020:

1 Mikhail E. H., Oscar Wilde: Interviews and Recollections. London: Palgrave Macmillan UK, 1979, Vol. 2, p. 378.

2 Հանգամանորեն տե՛ս Houghton Walter E., The Victorian Frame of Mind, 1830-1870. New Haven and London: Yale University Press, 1985, էջ 1-4:

Վեբ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի. թիվ 2 (70), ամիս-հունիս, 2020

մանը համընթաց՝ պարզորոշ նկատելի էր գիտելիքի հատվածականացումը (fragmentation)<sup>3</sup>:

Առաջընթացի և զարգացման **ռոմանտիկական** ու **գիտական** հայեցակարգերի ազդեցությամբ ձևավորված **պատմական մեթոդն** արդեն քննության էր առնում ընկերային իրողությունների լայն համալիր (հաստատություններ, ավանդույթներ, հավատալիքներ)<sup>4</sup>: Սա արդյունք էր անցյալի հանդեպ հարցադրումների վճռորոշ փոփոխությունների: Գիտելիքի **հարաբերականության և կասկածանքի** նոր մտակաղապարները «ինչ»-ը փոխարինեցին «ինչպես»-ով: Հստակորեն նշմարվում էին անցյալատեսության և պատմական գիտելիքի նորահայտ ըմբռնումները (Քարլայ, Մաքոլեյ ևն):

Բրիտանական մտքի պատմության մեջ քչերն են այնպիսի տպավորիչ բարձունքներ նվաճել և միաժամանակ մոռացության մատնվել հընթացս մեկ հարյուրամյակի, ինչպես Վիկտորիանական դարաշրջանի սոցիալական քննադատ, իմաստասեր, պատմաբան, ակնարկագիր **Թոմաս Քարլայը** (1795-1881): Իր գործունեության ծաղկուն շրջանում և հետագայում նա խորունկ ազդեցություն է գործել ժամանակի խոշոր գործիչների ու մտածողների լայն շրջանակի վրա (քաղաքական առաջնորդներ, աստվածաբաններ, բնագետներ<sup>5</sup>, տնտեսագետներ, վիպասաններ, բանաստեղծներ, պատմաբաններ, ամեն կարգի արմատականներ ու հեղափոխականներ): Արդ, ի՞նչը պատճառ հանդիսացավ նրա հեղինակության անկման և գրեթե մոռացության: Պարադոքս է դա, թե՛ սպասելի հետևանք:

Թ. Քարլայի առանցքային երկերից մեկը «**Հերոսների, հերոսների պատմունքի և պատմության մեջ հերոսականի մասին**» գիրքն է (1841), որը հեղինակն ի սկզբանե հրապարակային բանախոսությունների շարքով էր ներկայացրել<sup>6</sup>: Թեև երկի հրապարակումից անմիջապես հետո բազմաթիվ կարծիքներ էին հնչել (անվերապահ հիացմունքից մինչև կտրուկ մերժում<sup>7</sup>), այդուհանդերձ,

3 Տե՛ս նույն տեղում, էջ 12:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 15:

5 Թ. Քարլայն ինքը եղինբուրգի համալսարանում ուսումնառության տարիներին (1809-1814) հակված էր դեպի ճշգրիտ գիտությունները, հատկապես՝ մաթեմատիկան, երկրաչափությունը, աստղագիտությունը: 1822 թ. նա անգլերեն է թարգմանում Ադրիեն-Մարի Լեժանդրի (1752-1833) «Երկրաչափության հիմունքներ»-ը (1794): Արդի մաթեմատիկայում կիրառվում է «**Քարլայի շրջանագիծ**» հասկացությունը: Ուշագրավ է բրիտանացի մաթեմատիկոս, տրանսպան Օգաստես դը Մորգանի (1806-1871) դիտարկումը. «Ի դեմս Քարլայի՝ աշխարհը մեծ մաթեմատիկոս է կորցրել, անգամ եթե մեծ արվեստագետ է ձեռք բերել» (Young Louise M., Thomas Carlyle and the Art of History. Philadelphia, 1939, p. 132):

6 1837-1840 թթ. Քարլայը Լոնդոնում հանդես եկավ չորս շաբթվա բանախոսություններով՝ «Բանախոսություններ գերմանական գրականության մասին» (1837), «Բանախոսություններ գրականության պատմության մասին» (1838), «Բանախոսություններ արդի Եվրոպայի հեղափոխությունների մասին» (1839) և վերջապես հերոսների ու հերոսականի մասին շաբթը (1840), որը նշանավորեց Թ. Քարլայի հրապարակային բանախոսությունների բարձրակետը և միակն էր, որ նա պատրաստել էր հետագա հրատարակության հստակ մտադրությամբ (հանգամանորեն տե՛ս The Carlyle Encyclopedia. Ed. by **Mark Cumming**. Madison • Teaneck: Fairleigh Dickinson University Press, 2004, էջ 275-279):

7 Թ. Քարլայի «Հերոսներ»-ի վերաբերյալ ժամանակակիցների արձագանքի և ընկալման մասին տե՛ս **Goldberg Michael K.**, Introduction, in *On Heroes, Hero-Worship, and The Heroic in History*. Ed. **Michael K. Goldberg, Joel J. Brattin**,

Թ. Քարլայլը և հերոսականի նրա ընկալումները հետզհետե աղճատվեցին արդեն իսկ նրա կենդանության օրոք, իսկ Առաջին և Երկրորդ աշխարհամարտերն իրենց գաղափարական նախապատրաստմամբ ու հիմնավորմամբ վերջնական հարվածը հասցրին նրա հեղինակությանն անզրպիտ աշխարհում (և ոչ միայն): Այդ հարցում իրենց ուրույն դերն ունեցան նաև Թ. Քարլայլի գերմանասիրությունը<sup>8</sup> և նրա մտքի կազմավորման վրա գերմանական ժամանակագրի, իմաստասիրության անառարկելի ազդեցությունը<sup>9</sup>: Դրան գումարվեց նաև հեղինակի պատմագիտական վերջին աշխատությունը՝ «Պատմություն Ֆրիդրիխ II Պուսացու, որ կոչվում է Ֆրիդրիխ Մեծ» (1858-1865) վեցհատորյա երկը, որում նա փառաբանում էր պրուսական պետական կարգն ու ռազմամոլությունը<sup>10</sup>: Ավելին՝ Թ. Քարլայլի հեղինակությունն իր անկման ամենացածր կետին հասավ 1945 թ., երբ Յ. Գյոթելսն իր օրագրում հիշատակեց նրա «Ֆրիդրիխ Մեծ»-ը՝ իբրև Ա. Հիտլերի մխիթարանքի գլխավոր աղբյուր բեռլինյան բունկերում նրա կյանքի վերջին ամիսներին<sup>11</sup>:

20-րդ դարի երկրորդ կեսից միայն Վիկտորիանական դարաշրջանի վերաբերյալ հետազոտությունների համատեքստում ծայր առավ Թ. Քարլայլի և նրա հայացքների նորովի մեկնությունն ու ընթերցումը՝ գերծ նախորդ շրջանի նացիստական<sup>12</sup> և արմատական/գաղափարական այլ երանգավորումներից: Ի հայտ եկան մի շարք աշխատություններ, որոնք վերաբերվեցին և միանգամայն նոր հայեցակերպերով դիտարկեցին հեղինակին՝ անդրադառնալով նրա մտակերտ-

and **Mark Engel**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 1993, էջ lxii-lxxx (այսուհետ՝ **On Heroes**):

8 Եթե չասենք **գերմանամոլությունը**:

9 Թ. Քարլայլի վրա գերմանական ժամանակագրի և առիստոկրատիկ գերմանական մտքի ազդեցությունը լայնորեն հետազոտված է գրականագիտության և պատմագիտության մեջ (տես հատկապես **Wellek R.**, Carlyle and German Romanticism, in *Confrontations. Studies in the intellectual and literary relations between Germany, England, and the United States during the nineteenth century*. Princeton, New Jersey: Princeton University Press, 1965, էջ 34-81 և **Harrold Charles F.**, Carlyle and German thought: 1819-1834. Hamden • London: Archon Books, 1963, 340 էջ):

10 Գերմանական պետության հանդեպ Քարլայլի ակնածանքը զրեթե պաշտամունքի վերածվեց, երբ նա 1870 թ. Մայիսի 18-ին նամակ հղեց լոնդոնյան «Times»-ին, որում պաշտպանում էր էլզաս-Լոթարինգիայի նկատմամբ պրուսական պահանջները և Պրուսիայի գերիշխանությունը Եվրոպայում: 1874 թ. նա Պրուսիայի **Երախտիցի շքանշանի** արժանացավ Օ. ֆոն Բիսմարկի կողմից, իսկ 1895 թ. նրա ծննդյան հարյուրամյակը ազգային հերոսի մակարդակով նշվեց Պրուսիայում:

11 Ա. Հիտլերն իրեն նույնացնում էր Ֆրիդրիխ Մեծի հետև Ձ1945 թ. ապրիլին Führerbunker-ի ապաստարանում Յ. Գյոթելսը բարձրաձայն հատվածներ էր ընթերցում Հիտլերի համար վերջինիս սիրելի գրքից՝ Քարլայլի «Ֆրիդրիխ Մեծ»-ից: Դրանք այն հատվածներն էին, որոնք վերաբերում էին Ֆրիդրիխ Պրուսացու հուսահատ կացությանը Յոթնամյա պատերազմի վերջում Ելիզավետա թագուհու անակնկալ մահից անմիջապես առաջ, որը հանգեցրեց Պրուսիայի դեմ դաշինքից Ռուսաստանի դուրս գալուն: [...] Գյոթելսը հաղորդում է, որ իր ընթերցման ընթացքում «Ֆյուրերի աչքերն արտաավակալ էին»: Երբ 1945 թ. ապրիլին Ֆ. Ռուզվելտը մահացավ, Հիտլերը հույս էր տածում, որ շուտով համանման մի հրաշք էր կատարվելու» (Clive J., Carlyle's "Frederick the Great", in *Not by Fact Alone. Essays on the Writing and Reading of History*. New York: Alfred A. Knopf, 1989, p. 86):

12 Առիստոկրատիկ Երրորդ ռայխում (1933-1945) Քարլայլը Ֆ. Նիցշեից թերևս ոչ պակաս համարում ու հեղինակություն է վայելել: Այդ տարիներին ավելի քան 20 մեծածավալ հետազոտություն է հրատարակվել նրա հայացքների ու փիլիսոփայության վերաբերյալ: Գերմանիայում Թ. Քարլայլի և նրա գաղափարների ընկալման մասին տե՛ս **Zenzinger P.**, Thomas Carlyle's Reputation in Germany, in *Thomas Carlyle 181- Papers Given at the International Thomas Carlyle Centenary Symposium*. Ed. Horst W. Drescher. Frankfurt am Main: Peter Lang, 1983, էջ 331-350:

վածքի գանազան կողմերին՝ պատմագիտություն, գրականագիտություն, իմաստասիրություն, աստվածաբանություն, բանասիրություն, բնագիտություն ևն:

1993 թվականից մեկնարկեց Թ. Քարլայլի առանցքային երկերի գիտա-քննական հրատարակությունը՝ «**The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle**» մատենաշարով<sup>13</sup>: Այն արժևորվեց իրեն մշակութային իրադարձություն և շրջակետ նշանավորեց շտույանդացի մտածողի ու նրա գաղափարների ուսումնասիրության հարցում: Տակավին 1970 թվականից Դյուքի համալսարանի նախաձեռնությամբ ցայսօր շարունակվում է նաև Քարլայլի լիակատար նամականու հրատարակությունը<sup>14</sup>: Այն 19-րդ դարի ամենաընդգրկուն գրական արխիվներից է և անգնահատելի սկզբնաղբյուր է հեղինակի առաջադրած գաղափարների համակողմանի քննության ու ընկալման համար:

Արդի հումանիտար հետազոտություններում իր ուրույն տեղն ունի Թ. Քարլայլի՝ որպես պատմաբանի հեղինակության և նրա պատմագիտական հայացքների քննությունը: Այստեղ մեկնակետ է ծառայում հետևյալ հարցադրումը՝ ինչպե՞ս է պատմությունը պատկերացել նրան, և հետազոտական ի՞նչ գործիքակազմով ու գործընթացներով է նա հանգել իր պատմատեսական ընկալումներին<sup>15</sup>: Հետազոտողներն ի սկզբանե համերաշխ չէին և չեն այս հարցադրումների շուրջ: Կար երկու «ճամբար»՝ նրանք, ովքեր առհասարակ մերժում էին Թ. Քարլայլի կողմից որոշակի պատմագիտական հայեցակարգի մշակման փաստը, և նրանք, ովքեր հավաստում էին նրա հստակ պատմատեսական հայացքների գոյության և հետագա սերունդների վրա դրանց աներկբա ազդեցության իրողությունները<sup>16</sup>:

Քրիս Ռ. Վանդեն Բոսսեն Թ. Քարլայլի պատմագիտական հողվածների գիտաքննական հրատարակության իր առաջաբանում նկատում է, որ նա ստեղծագործել է բազմաթիվ ժանրերով, բայց կարելի է պնդել, որ նրա գրույթը գերազանցապես պատմական թեմաների վրա է կենտրոնացած<sup>17</sup>: Առհասարակ Քարլայլն ապրում և ստեղծագործում էր մի դարաշրջանում, երբ իր կայացման

13 Նախատեսված ութհատորյակից հրապարակի վրա է հինգը (տե՛ս <https://www.ucpress.edu/series/sewte/the-norman-and-charlotte-strouse-edition-of-the-writings-of-thomas-carlyle>, մուտք 20.04.2020):

14 Ներկայումս հրատարակության է պատրաստվում 48-րդ հատորը (տե՛ս <https://www.dukeupress.edu/the-collected-letters-of-thomas-and-jane-welsh-carlyle>, մուտք 20.04.2020):

15 Տե՛ս **Ferguson W.**, Carlyle as Historian. Occasional Papers of the Carlyle Society 2. Edinburgh: The Carlyle Society, 1966, էջ 8:

16 Արդի հումանիտար մտքում Թ Քարլայլի պատմասիրությունն ընդլայն հետազոտական թեմա է: Մեր ելակետը Քարլայլի պատմատեսական հայացքների (ուղղակի և անուղղակի) ազդեցությունն է պատմագիտական մտքի հետագա կերպավորությունների վրա: Այս առումով թարգմանության տողատակերում հաճախակի են հղումներն ու զուգահեռները **Աննայների** պատմագիտական դպրոցին և հատկապես Մ. Բլոկի հայացքներին: Իր հողվածում սա ուշադրության է առել նաև Ռ. Ֆերգյուսոնը՝ նկատելով, որ Մ. Բլոկի առաջադրած մի շարք նոր հղացքներ առկա էին արդեն իսկ Թ. Քարլայլի և Թ. Մաքլոլեյի պատմատեսական ընկալումներում (տե՛ս **Ferguson W.**, նշվ. աշխ., էջ 7-8):

17 Տե՛ս **Vanden Bossche Chris R.**, Introduction, in **Thomas Carlyle**, Historical Essays. Ed. **Chris R. Vanden Bossche**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley, Los Angeles: University of California Press, 2002, էջ xix (այսուհետ **Historical Essays**):

հանգրվանը թևակոխած պատմագիտական միտքը խորքային կերպավորություններ էր ապրում: Նա իր ուրույն ճանապարհով մասնակցեց այս բարդ հոլովության և հասավ փառքի իր մասնաբաժնին, բայց փառքի վերջալույսից առաջ դրանից քիչ բան էր մնացել: Քանզի ասպարեզ էր իջել արհեստավարժ պատմաբանների մի նոր սերունդ (նրանց թվում էր, օրինակ, Օսկար Բրաունհինզը), որոնք մատնացույց էին անում Թ. Քարլայի ձևակերպումների անճշտություններն ու անհիմն եզրահանգումները: Ուստի նա պիտակավորվեց անգամ իբրև սիրողական պատմաբան<sup>18</sup>:

Այդ փոփոխություններն առարկայական էին մանավանդ Գերմանիայում, որտեղ Լ. Ֆոն Ռանկեն իր «**quellenforschung**»<sup>19</sup> դրույթով դրեց գիտական պատմագրության հիմքերը՝ ներագդելով պատմաբանների մի ողջ սերնդի վրա, որը հայտնի էր դառնալու **Պրուսական դպրոց** անունով: Պատմության հետազոտման գերմանական մեթոդաբանությունը ոչ միայն խզեց կապերը սիրողական պատմագրության հետ, այլև ազատագրեց պատմությունը փիլիսոփայության կապանքներից՝ այդպիսով դնելով **պատմագիտության**՝ իբրև ինքնուրույն գիտակարգի հիմքերը:

Կային նաև այլ միտումներ. իր վեպերով պատմական նոր ժանր էր կերտում Վալտեր Սքոթը, նշանակալից էր պատմության փիլիսոփայության վերաբերյալ Գ. Վ. Ֆ. Հեգելի բեռլինյան դասախոսությունների շարքը (1822, 1828, 1830), Փրանսիայում **նոր ժոմանտիկական պատմագրության** մեկնարկը տվեց Ժ. Միշլեն: Քարլայն անտարակույս հաղորդ էր այս միտումներին, բայց նա մշակեց և առաջադրեց պատմության սեփական փիլիսոփայությունն ու ընկալումն իր երկու առանցքային հոդվածներում՝ «**Ի վերայ պատմութեան**» (1830) և «**Ռարձեալ ի վերայ պատմութեան**» (1833):

Ինչպիսին էլ լինեն Թ. Քարլայի՝ իբրև պատմաբանի արժանիքներն ու թերությունները, աներկբա է մի բան՝ նա իր նախորդը չունեւ<sup>20</sup> ավանդական պատմագրության մեջ և հանդես չէր գալիս որպես պատմագրության որևէ դպրոցի ներկայացուցիչ կամ ժառանգորդ: Ուստի դժվար է տեղորոշել նրան պատմագիտական մտքի զարգացման որևէ տիրույթում<sup>21</sup>:

Վաղ երիտասարդության տարիներին պատմական թեմաներով Թ. Քարլայի ընթերցանությունը մեկնարկեց անտիկ հեղինակներից, 18-րդ դարի հանրահայտ եռյակից՝ Դ. Հյում, Է. Գիբբոն և Ու. Ռոբերտսոն, սակայն չկան ստույգ վկայություններ, որ այդ շրջանում նա գլխավորապես հակված էր դեպի պատմությունը<sup>22</sup>: Թեև սկզբնապես այս հեղինակները խթան հաղորդեցին Քարլայի

18 Տե՛ս Ferguson W., նշվ. աշխ., էջ 9:

19 Սկզբնաղբյուրների հետազոտություն (գերմ.):

20 Տե՛ս Ferguson W., նշվ. աշխ., էջ 3:

21 Տե՛ս Cobban A., Carlyle's "French Revolution", in History. Vol. 48, No. 164 (1963), էջ 306:

22 Տե՛ս Shine H., Carlyle's Early Reading to 1834, with an Introductory Essay on his Intellectual Development. University of Kentucky Libraries Occasional Contribution 57. Lexington: King Library, 1953, էջ 33, 36:

պատմատեսական ինչ-ինչ ըմբռնումների ձևավորմանը, սակայն կարճ ժամանակ անց նա անջրպետվեց բանապաշտական-լուսավորական պատմագրությունից՝ պատմական այդ երկերը համարելով «արտաքին, մեխանիկական պատմություններ, որոնք խորամուխ չեն լինում պատմական կերպարների մտահոգևոր գիտակցության մեջ»<sup>23</sup>:

Հաջորդ հանգրվանը գերմանական ժամանակագրության ու փիլիսոփայությունն էր: Այս շարժման մտածողները պատմության իրենց ընկալմամբ առավել մերձ էին Քարլայի պատմահայեցողության և անցյալատեսության հիմնարար հղացքներին (պատմության մարգարեականության, պատմության մեջ աստվածային խորհրդանշանների առկայության ևն):

Թեև հետազոտողները հաճախ պատմագրական հստակ ավանդույթների և դպրոցների ուսուցանելով են դիտարկել Քարլայի պատմափիլիսոփայությունը, սակայն տակավին 1940-ական թթ. Ռ. Ուելլեքն իր «**Քարլայը և պատմության փիլիսոփայությունը**» հոդվածում լրջորեն կասկածի տակ դրեց ինչպես համակարգված պատմության փիլիսոփայության ու պատմատեսության, այնպես էլ պատմության հստակ պարբերացման և պարզորոշ պատմագիտական հայեցակարգի առկայությունը<sup>24</sup> Քարլայի պատմահայեցողության մեջ:

Շոտլանդացի մտածողի պատմական երկերը ժանրային առումով հարկ է արժևորել պատմագրության համատեքստում, մի մոտեցում, որը թույլ է տալիս գնահատել նրա թե՛ պատմափիլիսոփայությունը և թե՛ պատմության մեթոդաբանությունը: Ինչպես Ֆ. Ռոզենբերգն է նկատում, «արդի պատմական զգացողությունը», որ զարգացում էր սալոնում հրնթացս 19-րդ դարի, առաջ քաշեց հարցադրումներ «պատմական հետազոտության բնույթի, այն է՝ պատմության մեթոդաբանության ու փիլիսոփայության և պատմական ճշմարտության բնույթի վերաբերյալ», և հենց այս հարցերն էին, որ «զբաղեցնում էին Քարլայի միտքը նրա վաղ շրջանի երկերում»<sup>25</sup>, և որոնց նա շարունակ ու նորովի անդրադառնում էր իր հերթական պատմագիտական աշխատության մեջ:

«**Ի վերայ պատմութեան**» (1830) հոդվածով սկիզբ առավ Քարլայի՝ որպես պատմաբանի՝ շուրջ հինգ տասնամյակ ձգվող մտավոր գործունեությունը<sup>26</sup>: Հե-

23 Young Louise M., op. cit., p. 14.

24 Ռ. Ուելլեքն այս հոդվածում հերքում է **Լուիզ Մերվին Յանգի** «Թոմաս Քարլայը և պատմության արվեստը» (1939) և **Հիլ Շայնի** «Քարլայը և սենսիմոնականները. պատմական պարբերականության հղացքը» (1941) մենագրություններում առաջադրված այն տեսակետները, համաձայն որոնց Քարլայը մշակել էր պատմության և պատմագրության տեսության հետևողական, տրամաբանական հայեցակարգ (Յանգ), և պատմության նրա շրջափուլային (**հավատի** և **անհավատության** դարաշրջաններ) ընկալումը բխում էր սենսիմոնականների պատմության պարբերացման (**առաջադիմության** և **հետընթացի**, **քննադատական/չգնաժամային** և **օրգանական** դարաշրջաններ) տեսությունից: Չնայած հատկապես Լուիզ Մերվին Յանգի մենագրության այս և հետագա այլ քննադատություններին գիրքը վերստավել է երկու անգամ (1971, 2016) և, որոշ վերապահումներով հանդերձ, կանոնական է համարվում Քարլայի պատմագիտական հայացքների քննության տեսանկյունից:

25 Տե՛ս **Rosenberg P.**, The Seventh Hero. Thomas Carlyle and the Theory of Radical Activism. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1974, էջ 10:

26 Տե՛ս **Vanden Bossche Chris R.**, Introduction, էջ xxxii:

դինական այստեղ մի շարք խորաթափանց ըմբռնումներ է առաջ քաշում պատմական գործընթացի քննության հարցում, որոնք ապշեցուցիչ կերպով մերձ են արդի հայեցակետերին: Օրինակ՝ նա հատկանշում է պատմական տեղեկույթի անորոշությունը, պատումի միապախությունն ինչպես դեպքերն արձանագրելիս, այնպես էլ իբրև պատմություն դրանք ներկայացնելիս, պատճառականության բացահայտման բարդությունը, պատմության տարակարգերը (քաղաքական, եկեղեցական, մշակութային ևն) և **համաշխարհային պատմություն** հղացքը: Հենց վերջինիս հիմամբ են հետազոտողները նրան լծորդում պատմագրության գերմանական ավանդույթին (Լեսպինգ, Հերդեր, Մյուլլեր, Գյոթե, Շիլլեր): Ըստ Դ. Մորենսենի՝ Քարլայլի պատմահայեցողությունը նպատակ ուներ հաշտեցնելու/համադրելու պատմության երկու գերակա տարատիպերը՝ **կալվինիստական** և գերմանական **տրանսցենդենտալիստական**<sup>27</sup>: Պատմության ամբողջական նկարակտավը համարելով անհնարին և անըմբռնելի<sup>28</sup>՝ Քարլայլն առ **Աստվածաշունչ** հավատը փոխարինեց առ **Պատմություն** հավատով՝ այդու ակամա հարելով Հեգելին և Մարքսին<sup>29</sup>: Արդ, «պատմությունը Քարլայլին պատկերանում է իբրև աստվածային գորություն, որը գործուն կերպով կերտում է ապագան: Եվ աստ կարևորն այն է, որ աստվածային [կրավորական] առաջնորդությունից պատմությունը վերածվում է իբրև ինքնին աստվածայինի, Աստծո մարմնավորման»<sup>30</sup>:

Վերջին 10-15 տարիներին հարաճուն հետաքրքրություն է նկատվում Թ. Քարլայլի պատմական երկերի աղբյուրների ուսումնասիրության հարցում: Այս **վերադարձ սկզբնաղբյուրներին** միտումը կարող է հավասարակշիռ հայացք ապահովել նրա գրական պատմությունները ոչ միայն գրականության և գրականագիտության, այլև հենց պատմագիտության տիրույթում դիտարկելու հարցում:

27 Sté u **Sorensen D.**, Carlyle’s Method of History in “The French Revolution”. Carlyle Society, 1983, էջ 9:

28 Ուշագրավ է Զ. Ռոզենբերգի դիտարկումը Ֆրանսիական մեծ հեղափոխության մասին Քարլայլի պատմագիտական գլխավոր երկի (1837) խորագրի վերաբերյալ: Հետազոտողն ուշադրության է առնում այն հանգամանքը, որ Քարլայլն իր աշխատությունն օրինաչափորեն չի վերնագրել “**The History of the French Revolution**” («**Ֆրանսիական հեղափոխության պատմություն**»), այլ “**The French Revolution: A History**” («**Ֆրանսիական հեղափոխությունը. պատմություն**»): Պատմությունն անորոշ առումով (a) դնելով Քարլայլն արդեն իսկ խորագրի մեջ հատկանշում է ինքնին իրադարձության [Պատմության] իբրև Ամբողջի անորոշությունն ու անըմբռնելիությունը (տես **Rosenberg J. D.**, Carlyle and the **Burden of History**. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1985, էջ 29-30):

29 Sté u **Le Quesne A. L.**, Carlyle. Oxford, New York: University Press, 1982, էջ 33:

30 **Hill M.**, “History as a Real Prophetic Manuscript”: Reason and Revelation in Thomas Carlyle’s Historical Essays. “Literature and Belief”. 25:1 (2005), p. 6.

«Ի ՎԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»<sup>31</sup> (1830)<sup>32</sup>

Հին [հույները] Կլիոյին<sup>33</sup> համարել են Հիշողության ավագ դուստրը և գլխավորը<sup>34</sup> մուսաներից, որին (անկախ նրանից) հարգում ենք նրա արվեստի էական հատկանիշները և կամ նրա կիրառությունն ու ճանաչումն ի մեջ մարդկանց) ցարդ պատշաճ արժանիք է վերապահվում: Պատմությունը ինչպես որ բոլոր գիտությունների հիմքն է, այնպես էլ մարդու հոգեկան բնության առաջին պարզորոշ արգասիքը, Մտածողություն կոչվածի վաղագույն արտահայտությունը: Այն միաժամանակ հետ և առաջ է նայում<sup>35</sup>, զի, հիրավի, գալիք ժամանակը

- 31 Թարգմանությունը ըստ Thomas Carlyle, Historical Essays, էջ 3-13: Անհրաժեշտ ենք համարում նկատել հետևյալը. Քարլայլի երկերում գլխավորապես գերմաներենի ազդեցությամբ, իսկ որոշ դեպքերում նաև առանձնակի շեշտադրության համար հասարակ գոյականները հաճախ մեծատառով են գրված: Երկերի գիտաքննական հրատարակության խմբագրակազմը մեծատառ գրություններն անփոփոխ է թողել՝ ելնելով սեփական երկերի խմբագրման/լրամշակման հարցում հեղինակի գործուն մասնակցությունից: Տվյալ դեպքում Քարլայլը հանգամանորեն խմբագրել/արքագրել է (նրա մասնակցության մեջ հայտնի վերջին հավաստի վկայությունը) “Miscellanies”-ի 1840 թ. (երկրորդ) լուսնային հրատարակությունը, որում տեղ է գտել նաև սույն հոդվածը: Ուստիև քննական հրատարակության խմբագիրը պահպանել է գրության այն բոլոր ձևերը, որոնք հաստատապես հեղինակին են և ոչ զրաշարինը: Այդուհանդերձ, մենք պահպանել ենք մեծատառ գրության լոկ այն դեպքերը, որոնք ոչ այնքան գերմաներենի ազդեցությունը, որքան որ [բառի, արտահայտության] առանձնակի շեշտադրությունն են ցուցանում: Նույնը վերաբերում է նաև մեկնություններում հեղինակի այլ գրվածքներին արված հղումներին և զուգահեռներին: Հոդվածի վերաբերյալ խմբագրական որոշումների (մեծատառ/կորոպուստառ, շեղատառ գրություններ, կետադրություն ևն) մանրակրկիտ քննության մասին տե՛ս Discussion of Editorial Decisions, in *Historical Essays*, էջ 893-896:
- Երկու խոսք թարգմանության մասին: Քարլայլի անգլերենն ինքնին առանձին հետազոտական թեմա է: Նրա արձակի շարահյուսությունն ու ոճը երևույթ են նշանավորում Վիկտորիանական դարաշրջանի գրականության մեջ: Բացառիկ է դեռևս 1971 թ. **Ռոբերտ Լի Օքսնի** «Շարահյուսությունը Թոմաս Քարլայլի արձակ ոճում. քանակային, լեզվաբանական վերլուծություն» մենագրությունը: Այստեղ Օքսնը հեղինակի լիակատար երկերից ընտրել է շուրջ 200 անկանոն, պատահական պարբերություններ և, կիրառելով համակարգչային/հաշվողական (computational) շարահյուսական վերլուծությունը, հատկանշել Քարլայլի շարահյուսական կառույցների ոճաբանորեն էական և ինքնատիպ տարրերը: Հետևաբար թարգմանության մեջ մենք ըստ կարելիության փոխանցել և պահպանել ենք հեղինակային կառույցները: Առանձին դեպքերում պահպանվել են նաև կետադրական ինչ-ինչ առանձնահատկություններ: Հեղինակի շարահյուսության ու ոճի ինքնատիպությունն ընդգծելու համար թարգմանության մեջ ներմուծել ենք նաև գրաբարյան որոշ դարձվածքներ:
- 32 Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է “Frazer’s Magazine 2”-ի N 10-ում՝ «Մտքեր ի վերայ պատմութեան» (“Thoughts on History”) խորագրով (նոյեմբեր, 1830): Թ. Քարլայլի շատ ձեռագրերի պես սույն հոդվածի ձեռագիրը ևս չի պահպանվել:
- 33 Դասական դիցաբանության մեջ Կլիոն արվեստների ինը մուսաներից կամ աստվածուհիներից մեկն է՝ պատմության մուսան: Մուսաների մայրը Մենմոսինեն (Հիշողություն) է: Հոդվածի թարգմանության որոշ մեկնություններ Քարլայլի արձակի հղացական/անկարկային ոճի (օրն՝ առ Ու. Շեքսպիր, Վերգիլիուս, Ռ. Սաութի) բացահայտումներն են քննական հրատարակության խմբագիր Քրիս Ռ. Վանդեն Բոստեի կողմից:
- 34 Հունական առասպելաբանության մեջ մուսաների աստիճանակարգ, որպես այդպիսին, գոյություն չուներ: Քարլայլը Կլիոյին գլխավորն է համարում՝ ելնելով ըստ ամենայնի Հերոդոտոսի «Պատմության» ինը մուսաների անուններով ինը զրբերի բաժանումից, որոնցից առաջինը հենց Կլիոյի անունն է կրում: Միայն 17-րդ դարի 1-ին կեսին գերմանացի ճիզվիտ գիտնական Աթանասիուս Կրիլխերը (1601/1602-1680) հրատարակեց իր “Ars Magna Lucis et Umbrae”-ն («Լույսի և ստվերի մեծ արվեստը», 1646), որում նա ինը մուսաներին դասակարգել էր ըստ հրեշտակաց դասի նվիրապետության, որտեղ Կլիոն, սակայն, երկրորդն է:
- 35 Բնագրում **looking both before and after**: Հմտ. Ու. Շեքսպիր, Համլետ 4.4.36-39. «Ով մեզ ստեղծեց անցյալին ու ապագային / Նայող զորեղ գիտակցությամբ, մեզ չտվեց / Չիրքն ու խելքը աստվածային» (**Շեքսպիր Ու.**, Համլետ, անգլերենից թարգմանությունը, ուսումնասիրությունը և մեկնությունները **Արամ Թուխյանի**, Եր., «Սարգս Խաչենց • Փրինթինգո», 2013, էջ 110, ծնթ. համար էջ 271-272):

Վլեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի. թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020



(աներևելի, սակայն հստակորեն ձևավորված, կանխորոշված և անխուսափելի) արդեն իսկ ակնկալվում է ներկա ժամանակի մեջ<sup>36</sup>, և լոկ այս երկուսի համակցությամբ է յուրաքանչյուրի իմաստն ամբողջանում: Սիբիլյան գրքերը<sup>37</sup> թեպետ հին են, բայց հնագույնը չեն: Որոշ ազգեր ունեն մարգարեություն, այլը՝ ոչ: Բայց համայն մարդկության մեջ չկա այնքան անքաղաքակիրթ ցեղ, որ Պատմության բովով չի անցել, թեպետ մի քանիսը բավականաչափ գրագետ չեն՝ [անգամ] մինչև հինգը հաշվելու համար<sup>38</sup>: Պատմությունը գրվել է կիպու-թելերով<sup>39</sup>, փետրանկարներով, վամպում-գոտիներով<sup>40</sup>, ավելի հաճախ՝ հողաթմբերով և վեհակերտ քարակույտերով (միևնույն է՝ իբրև բուրգ թե քարաշեղջ)<sup>41</sup>, քանզի կելտն ու դալտին<sup>42</sup>, կարմրամորթն ու սպիտակամորթն ապրում են երկու հավերժությունների միջև<sup>43</sup>, և, մաքառելով ընդդեմ Մոռացության, նրանք պարզ գիտակից հարաբերությամբ (քանզի աղոտ, անգիտակից հարաբերությամբ նրանք արդեն իսկ միավորված են) ինքնահոժար կմիավորվեն բովանդակ Ապագային ու բովանդակ Անցյալին:

Պատմության մեր ձիրքը, կարելի է ասել, բնածին է՝ իբրև մեր գլխավոր ժառանգություն: Որոշ առումով բոլոր մարդիկ պատմաբան են: Մի՞թե յուրաքանչյուր հիշողություն լի չէ տարեգրություններով, որտեղ խիհնդն ու սուզը, նվաճումն ու կորուստը բազմակերպորեն փոխհաջողում են, և, փիլիսոփայությամբ կամ առանց դրա, մի փոքրիկ ներքին թագավորության բովանդակ հաջողությունները

36 Հմմտ. **Թ. Էլիոթ**, Չորս Կվարտետ 1.1-3. «ժամանակը ներկա և ժամանակն անցյալ / Հավանաբար ներկա են ապագայի մեջ, / Իսկ ժամանակն ապագա՝ անցյալի մեջ է» (**Էլիոթ Թ.**, Չորս Կվարտետ, թարգմ. **Ս. Ալկոսյանի**, Եր., Հեղ. հրատ., 2013, էջ 13): Էլիոթի այս բանատողերի հետ զուգահեռը պատահական չէ: Քարլայլ-Էլիոթ գաղափարական առնչությունների և նրանց հայացքների զուգարկական քննությունը տե՛ս **Donovan D.**, Spiritual Selfhood and the Modern Idea: Thomas Carlyle and T. S. Eliot. Xlibris Corporation, 2004, 240 էջ:

37 Մարգարեություններ Հռոմի ձակատագրի մասին, որ Կոմեի Սիբիլյան վաճառեց Տարքվինիոս Գոռոզին (Ք. ա. 535-509):

38 Տարածված ընկալում Վիկտորիանական դարաշրջանում. «Ամերիկայում կան ցեղեր, որոնք երեքից բարձր թվային արտահայտման համար որևէ բան չունեն իրենց լեզվում» (Encyclopedia Britannica; or, A Dictionary of Arts, Sciences, and Miscellaneous Literature. Edinburgh: Bell, 1810, 2:621):

39 Ինկյան **կիպուն** հանգուցավոր նրբաքուրեղից բաղկացած հարմարանք էր, որ գործածվում էր թվերը հաշվելու ու գրանցելու համար և մոտավորապես համարժեք էր հյուսիսամերիկյան հնդկացիների **վամպում** գոտուն, թեպետ վերջինս ծիսական առարկա էր:

40 Տե՛ս վերևում:

41 Բոլորն էլ թաղման ձևեր են՝ հողաթմբերը՝ Հյուսիսային Ամերիկայի բնիկ ամերիկացիների շրջանում, բուրգերը՝ Հին Եգիպտոսում, և քարաշեղջերը Շոտլանդիայում:

42 Հղումը դալտիներին (եգիպտական քրիստոնեական էթնակրոնական խումբ) կարող էր թելադրված լինել բուրգերի օրինակով, թեև դալտիները Եգիպտոսի պատմության առավել ուշ շրջանում են ասալարեզ իջել:

43 Քարլայլի սիրելի դարձվածներից, որը 2. Հարոլդը Քարլայլի "Sartor Resartus"-ի իր հրատարակությունում վերագրում է ժան Պոլ Ռիխտերին (տե՛ս **Harrold Charles F.**, ed. **Sartor Resartus**. New York: Odyssey, 1937, էջ 66, N 1): Վաղ 1829 թ. Քարլայլն իր «Նոթատետրեր»-ում գրել էր՝ «Յուրաքանչյուր կենդանի մարդ տեսանելի առեժժված է. նա քայլում է երկու հավերժությունների ու անվերջությունների միջև (ինչպես արդեն ասվել է)» (Two Note Books of Thomas Carlyle, from 23rd March 1822 to 16th May 1832. Ed. **Charles Eliot Norton**. New York: Grolier, 1898, p. 136, տե՛ս նաև Critical and Miscellaneous Essays. 5 vols. 1:73 (այսուհետ՝ **Miscellanies**): Մի քանի էջ հետո նա նշում է, թե հենց նոր ավարտեց «ժամանակների նշանները» (1829), որտեղ գրում էր. «Ամենաանճառ օրը, որ անցնում է մեր կողքով, երկու հավերժությունների միախառնման վայրն է» (**Miscellanies** 2:59): Եվ մեկ տարի անց "Sartor Resartus"-ում՝ «Մի՞թե նա [մարդը - Գ. Ճ.] այդպիսով կանգնած չէ անծիրությունների կենտրոնում՝ հավերժությունների միախառնման վայրում» (**Thomas Carlyle**, Sartor Resartus. Ed. **Rodger Tarr** and **Mark Engel**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley: University of California Press, 2000, p. 50, ծնթ. համար էջ 290 (այսուհետ՝ **Sartor Resartus**)):

և նրա արտաքին ու ներքին ողջ քաղաքականությունը մի՞թե անջնջելիորեն արձանագրված չեն: Ինքնին մեր խոսքը զարմանալիորեն պատմական է: Մարդկանց մեծ մասը, կարող եք նկատել, խոսում է լոկ պատմելու համար. ոչ թե հարորդելու իրենց մտքերը, որոնք հաճախ իսկապես չնչին բան են, այլ ցույց տալու, թե ինչ են իրենք վերապրել կամ տեսել, որը բոլորովին անասհմանափակ մի բան է, եթե խոսողները երկարաբանեն: Խզեք մեզ Պատումից, և խոսակցության հոսքը, անզամ ամենախմաստունների միջև, կվերածվի անկապակից միավորների և համակ ի չիք կդառնա հիմարների շրջանում: Այսպիսով, քանզի մենք ընդամենը ներկայացնում ենք Պատմությունը, ապա ավելին չենք ասում, քան միայն պատմում ենք այն: Ավելին՝ ամենապայն առումով մեր ողջ հոգևոր կյանքը հիմնված է [- Պատմության] վրա: Քանզի, խստիվ ասած, ի՞նչ է բովանդակ Իմացությունը ևս, եթե ոչ գրի առնված Փորձառություն<sup>44</sup> և Պատմության արգասիք, որոնցից, հետևաբար, Դատողությունն ու Հավատը ոչ պակաս, քան Գործողությունն ու Կիրքը, հիմնական առաղծն են:

Սահմանափակ և միակ կիրառելի ձևով Պատմությունը, որպես այդպիսին, Պատմության այն բաժինը, որում խոսվում է երևելի գործերից, հին և նոր բոլոր ժամանակներում դասվել է ի շարս ամենաբարձր արվեստների և թերևս երբեք առավել բարձր համարում չի ունեցել, քան մեր այս ժամանակներում: Քանզի մինչդեռ նախկինում Պատմության հմայքը գլխավորապես զարմանահրաշի, անհմանափի մեր ընդհանրական պահանջմունքի բավարարումն էր, և նա լոկ Հագներգուի (Minstrel) ու Պատմախոսի (Story-teller) գործառույթ ուներ, ապա այժմ նա արդեն Ուսուցիչ է դարձել և սովորեցնում է՝ ինչպես բավարարել այդ պահանջները<sup>45</sup>: Արդյոք այդ պատմական կերպարի վեհությունը Պատմությունը ձեռք չի՞ բերի նրա խստությունն ու պաղությունը, արդյոք Հյունի<sup>46</sup> կամ Ռո-

44 Հոգեբանական փորձապաշտության (empiricism) հիմնադրույթներից: «Մարդկային իմացությունը չի կարող մարդու փորձառությունից անդին լինել» (Locke J., An Essay Concerning Human Understanding. Ed. Peter H. Nidditch. Oxford: Clarendon, 1979, 2.1.19):

45 Այս հակադրությունը Քարլայլը զարգացնում է հետագա շարադրանքում: Հերոդոտոսին և Ֆրոասարին, որոնք իրենց պատմություններում առաջադեպական եղելություններ են պատկերում, նա հակադրում է 18-րդ դարի պատմաբաններ Դ. Հյունին և Ռ. Ռոբերտսոնին, որոնք կասկածի տակ էին դնում այդօրինակ պատմումները և պատմությունն էապես ուսուցողական համարում: Հավանական է, որ Քարլայլն այստեղ հղում է նաև միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում անհրաժեշտ փոփոխություններին, ի մասնավորի դրանցում պատմության ներառմանը, որը հանրակրթական դպրոցների ու համալսարանների ուսումնական ծրագրերում կանոնական դարձավ միայն 19-րդ դարակզբից (մինչ այդ պատմությունն առավելապես օժանդակ գիտակարգ էր համալսարաններում):

46 **Ղեվլիդ Հյուն (1711-1776)**, շոտլանդացի փիլիսոփա, պատմաբան, տնտեսագետ, հեղինակել է «Անգլիայի պատմությունը» (1754-1762) վեցհատորյա աշխատությունը: 1817 թ. նոյեմբերի 20-ին Ջեյմս Ջոնսթոնին հղած նամակում Քարլայլը գրում է. «Հյունը պարզորոշ և անկանխակալ է համարվում, բայց նա նվազ համակրանք է տածում, քան կարելի էր սպասել, հերոս հայրենասերներ հեմփդենների ու սիդնիների հանդեպ, որոնք փառավորում են Անգլիայի պատմության էջերը» (Maason D., Edinburgh Sketches and Memories. London: Black, 1892, p. 231 և The Collected Letters of Thomas and Jane Welsh Carlyle. Ed. C. R. Sanders, K. J. Fielding, C. de L. Ryals, Ian Campbell, John Clubbe, Aileen Christianson, Hilary J. Smith, Janetta Taylor, Bill Bell. 24 vols. to date. Durham, N. C.: Duke UP, 1970 on. Vol. 1, p. 115 (այսուհետ Letters)):



օգտավետ է այն ցայժմ եղել: Արդյոք մարդկանց ունեցած փոքր գործնական իմաստության մեծ մասը Պատմության արհեստավարժ հետազոտությունից է ծագել, թե՛ այլ՝ նվազ հոխորտ (boasted) աղբյուրներից, որոնցով, իրերի ներկա դրությամբ, Մարլբորոն<sup>51</sup> կարող է նշանավոր դառնալ աշխարհում առանց որևէ Պատմության, այլ միայն նրանով, ինչ նա քաղում է Շեքսպիրի պիեսներից<sup>52</sup>: Ավելին՝ արդյոք այդ նույն փորձուսուցման մեջ պատմության փիլիսոփայությունն արդեն պատշաճորեն վերձանն է այդօրինակ բովանդակ գիտության սկզբնատարրը: Ի՞նչ նպատակ և իմաստ կարող է ունենալ այդ զարմանահրաշ, հարսփոփոխ Կյանքը, որ այն քննում ու պատկերում է: Որտեղից է սկիզբ առել մարդկային ճակատագրերի ընթացքն այս Երկրի վրա, և դեպի ո՞ւր են դրանք գնում: Կամ թե՛ արդյոք նրանք ունեն՝ որևէ ընթացք ու ուղղություն և հիրավի առաջնորդվո՞ւմ են անտեսանելի, առեղծվածային Իմաստությամբ, թե՛ սոսկ պտտվում են անել բավիղներում՝ առանց ճանաչելի առաջնորդության: Կարելի է կարծել միանգամայն հիմնարար հարցեր Պատմության յուրաքանչյուր փիլիսոփայությունում, որոնց վանական տարեգիրների<sup>53</sup> (որոնք սովոր էին այդ հարցերին պատասխանել իրենց ժամագրքի ու ծիսամատյանի վաղուց մարած լույսով) դարաշրջանից ի վեր փիլիսոփայության պատմաբանների մեծ մասը լոկ վարանոտ հայացք է նետել հեռվից: Շատերն անգամ դա էլ չեն արել:

Բանն այն է, որ աստ առկա է երկու խոչընդոտ, որ երբեք համակ հաղթահարելի չեն: [Նախ՝] որպեսզի փիլիսոփայությունը փորձով ուսուցանի, այն պետք է պատրաստ լինի դրան, իսկ փորձը պետք է կուտակվի և պարզորոշ կերպով գրի առնվի: Արդ, զանցառելով առաջին նկատառումը և հաշվի առնելով լոկ վերջինը, թող որ յուրաքանչյուր ոք (ով քննել է մարդկային հարաբերությունների ընթացքը և [տեսել], թե որքան խրթին, կնճռոտ ու անմեկին են, անգամ մեր սեփական աչքերով գննելիս, նրանց հազարապատիկ, խառնակ գործերը) ասի, թե արդյոք դյուրին կամ անհնարի՞ն է դրա ճշմարիտ պատկերումը: Ընկերային կյանքը հասարակությունը կազմող բոլոր անհատ մարդկանց կյանքերի ամբողջությունն է, իսկ Պատմությունն անհամար կենսագրությունների հանրագումարն է<sup>54</sup>: Բայց

51 **Ջոն Չեքի, Մարլբորոյի դուքս (1650-1722)**, Անգլիայի պատմության մեծագույն գեներալներից, բրիտանական բանակի գերագույն հրամանատարը Իսպանական ժառանգության համար պատերազմում (1701-1714): Նրա գլխավորությամբ բրիտանական և դաշնակիցների բանակները կարևոր հաղթանակներ են տարել Լուի XIV-ի նկատմամբ Բլենհայմի (1704), Ռամիլիի (1706) և Աուդենարդեի (1708) ճակատամարտերում:

52 Քարլայլն այս դրվագը հիշատակում է նաև իր «Բանախոսությունների գրականության պատմության մասին»-ում (1838), որում նշում է. «Ինձ համար միանգամայն հասկանալի է դուքս Մարլբորոյի այն հայտարարությունը, թե Անգլիայի պատմության իր իմացության համար նա պարտական է Շեքսպիրին, և «Ներոսների, հերոսների պաշտամունքի և պատմության մեջ հերոսականի մասին»-ին (1841) (տես Lectures on the History of Literature. Ed. J. Reay Greene. New York: Scribner, 1892, էջ 156 և On Heroes, էջ 93):

53 Վանականներ, որոնք տարեգրություններ էին կազմում: Անգլիական ամենահայտնի տարեգրությունը «Անգլոսաքսոնական ժամանակագրություն»-ն է, որ հիմնված է Բեդա Պատվելու «Անգլիական ժողովրդի եկեղեցական պատմության» (731) վրա: «Շիլլերի կյանքը» գրքում Քարլայլը գրում է. «Վանական ժամանակագրի համար սովորական բան է առաջընթացը գնահատել ըստ հիմնված վանքերի քանակի, իսկ մարդկային առաջինությունը ըստ հոգևորականության արված նվիրատվությունների» (Life of Schiller, 158):

54 Քարլայլն այս պնդումն անում է նաև «Ի վերայ կենսագրութեան» հոդվածում (տես՝ ս նաև Note Books, էջ 238):

եթե մեկ կենսագրությունը, անգամ մեր սեփականը, որ քննում և ամփոփում ենք ըստ կարելիւն, շատ առումներով անհասկանալի է մնում մեզ համար, ապա որքան ավելի՝ այդ միլիոնավորները, որոնց ինքնին փաստերը, էլ չսասած դրանց իմաստը, մենք չգիտենք և չենք կարող իմանալ:

Մեզ չի բավարարի և այն պնդումը, թե Կյանքի ընդհանրական ներքին պայմանը նույնն է բոլոր դարաշրջաններում, և սուսկ համընդհանուր ձիրքից, ընդհանուր բախտից ու առավել նշանակալի փոփոխություններից (որոնց ժամանակ առ ժամանակ ենթարկվել է Կյանքի արտաքին կերպարանքը) ակնառու շեղումներն են, որ արժանի են գրոց հիշատակի: Փոխարենը կարելի է պնդել, որ Կյանքի ներքին պայմանը, մարդկության (որքանով որ մարդիկ գուտ ավտոկլավներ<sup>55</sup> չեն) գիտակից կամ կիսագիտակից նպատակը նույնը չեն և ոչ մի երկու դարաշրջանում, և ոչ էլ առավել նշանակալից արտաքին փոփոխություններն են դյուրավ արձանագրելի կամ միշտ համակ պատկերելի: Ո՞վ էր ավելի մեծ նորարարը, ո՞վ էր առավել ազդեցիկ անձը մարդկային պատմության մեջ. նա՞, ով առաջինը գլխավորեց բանակներն Ալպերի վրայով և Կաննեի ու Տրագիմենեի<sup>56</sup> հաղթանակները տարավ, թե՞ այն անանուն շինականը, որն առաջին անգամ երկաթե բահ կռեց իր համար: Կաղնին հատելիս ողջ անտառն է արձագանքում, սակայն մի աննկատ զեփյուռ հարյուրավոր կաղիններ է լռելայն սերմանում: Ճակատամարտերն ու պատերազմական հուզումները, որ այդժամ խլացնում են ամեն ականջ և խնդությամբ կամ սարսափով համակում ամեն սիրտ, անց են կենում գինետան ծեծկռտուքի պես և, բացառությամբ մի քանի մարաթոնների<sup>57</sup> ու մորգարտենների<sup>58</sup>, հիշվում են պատահամբ, այլ ոչ ըստ արժանիքի: Ինքնին օրենքները, քաղաքական սահմանադրությունները մեր կյանքը չեն, այլ լոկ այն տունն են, որտեղ ընթանում է մեր կյանքը, ավելին՝ դրանք ընդամենը տան մերկ պատերն են, որի բովանդակ հիմնական կահավորանքը, գյուտերն ու ավանդույթները և առօրյա սովորույթները, որ կանոնարկում և ապահովում են մեր գոյությունը, ոչ թե դրակոնների<sup>59</sup> ու հենվողենների<sup>60</sup> վաստակն են, այլ փյունիկյան նա-

55 Բնագրում *digesting machines*: Խոսքը ֆրանսիացի ֆիզիկոս-գյուտարար Դենի Պապենի (1647-1713) գյուտի մասին է (1679): Նա ստեղծել էր մի անոթ, որում ջրի եռման կետը բարձրանում էր գոլորշու ճնշման աճի ազդեցությամբ: Սրա հիմամբ հետագայում ստեղծվելու էր ճնշվող (pressure cooker): Պապենը, ըստ էության, կանգնած էր շոգեմեքենայի գյուտի ակունքներում:

56 Իր բանակներն Ալպերով անցկացնելուց հետո Հանսիբալը ջախջախեց հռոմեացիներին Տրագիմենեում (Ք. ա. 217 թ.) և Կաննեում (Ք. ա. 216 թ.): Սկզբում նշելով Կաննեն Քարլայլը շփոթում է, որ այն Տրագիմենեի ձակատամարտից մեկ տարի անց էր տեղի ունեցել:

57 Ք. ա. 490 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Մարաթոնի ձակատամարտում աթենացիները պարտության մատնեցին պարսիկներին:

58 1315 թ. նոյեմբերի 15-ին Շվեյցարական Համադաշնությունը Մորգարտենի ձակատամարտում հաղթանակ տարավ ավստրիացիների նկատմամբ: 1822 թ. Քարլայլը հեղինակել էր «Տաղ ի վերայ Մորգարտենի ձակատամարտի» չափածո պոեմը, որում Մորգարտենի մարտը համեմատում է Մարաթոնյանի հետ՝ «And the field of Morgarten in splendour shall grow, / Like Marathon's field, to the end of the world» (Froude James A., Thomas Carlyle: A History of the First Forty Years of His Life, 1795-1835. 2 vols. London: Longmans, 1890, 1:172-173, 176 և Letters, 2:161-162, 219): Իր այս պոեմում Քարլայլն իր համակրանքն էր արտահայտում շվեյցարացի գյուղացիների նկատմամբ, որոնք ընդվզել էին բռնակալ Հաբսբուրգների դեմ:

59 Աթենացի օրենսդիր (Ք. ա. 7-րդ դար), որը գոյություն ունեցող բանավոր օրենքները փոխարինեց գրավորով:

վազների, իտալացի որմնադիրների և սաքսոնացի մետաղագործների, իմաստասերների, ալքիմիկոսների, մարգարեների և արվեստագործների ու արհեստագործների վաղուց մոռացված ողջ շարանի, որք ի սկզբանե միահամուռ սովորեցրել են մեզ, թե ինչպես մտածել ու գործել, ինչպես իշխել հոգեկան և ֆիզիկական Բնության վրա: Միանգամայն կարող ենք ասել, որ մեր Պատմության առավել նշանակալի մասն անդարձ կորած է և (ինչպես երբեմնի գոհություն էին հայտնում «չընդունված ողորմածության համար»<sup>61</sup>) հարգանք նայել Անցյալի մթին, անբնակ վայրերին, որտեղ մեր գլխավոր երախտավորները (իրենց ամենայն համար ջանքերով, բայց ոչ դրանց պտուղներով) հանգչում են անկերպարան մոռացության մեջ:

Այդպես անկաստար է և այն նույն փորձը, որով փիլիսոփայությունը պետք է ուսուցանի: Ավելին՝ անգամ այն իրողությունների առնչությամբ, որոնք գրի են առնվել և իրենց ծագմամբ արժանի համարվել գրավոր հիշատակման (որոնց շարադրանքն էլ հենց այն է, ինչ մենք այժմ Պատմություն ենք կոչում), մի՞թե դրանց մեր ընկալումը համակ անբավարար չէ, և առհասարակ հնարավոր է պատկերել դրանք այնպես, ինչպես եղել են: Սըր Ուոլթեր Ռեյլիի հին պատմությունը, որն իր պատուհանից փողոցային մի ինչ-որ իրարանցման էր հետևում<sup>62</sup>, ինչն այնուհետ երեք ականատեսներ պատմեցին երեք տարբերակով (ինքնին տարբեր Սըր Ռեյլիի տեսածից), տակավին շիտակ դաս է մեզ համար: Բնեցեք, թե ինչպես են ստեղծվում պատմական փաստաթղթերն ու գրավոր վկայությունները, նույնիսկ բարեխիղճ վկայությունները, որոնցում տեղեկատուներն անկանխակալ են եղել իրենց անձնական զնահատականներում, հանգամանք, եթե ոչինչ ավելի չպահանջվի էլ, մշտապես ամենահավագությունների շարքում կլինի: Պատմական գործառնության (Transaction) իրական առաջնային հատկանիշները, այն գործողությունները, որ էսպես բնորոշում են այն, և միմիայն դրանք են արժանի գրավոր հիշատակության, ամենևին էլ առաջնահերթ մատնանշելին չեն: Նախ և առաջ տարբեր ականատեսների շրջանում, որոնք նաև շահագրգիռ կողմեր են, լոկ տարտամ զարմանք է տիրում, երկյուղ կամ հույս և Ասեկոսեի հազարավոր լեզուների<sup>63</sup> աղմուկը, մինչև որ որոշ ժամանակ անց վկայությունների բախումը

60 **Ջոն Հեմիլին (1594-1643)**, խորհրդարանական առաջնորդ Չարլզ Առաջինի կառավարման շրջանում (1625-1649): Երբ 1822 թ. Քարլայլն ուրվագծել էր «Անգլիայի պատմությունը Համագործակցության շրջանում», մտադիր էր կենտրոնանալ Լոդի, Ֆոքսի, Քլարենդոնի, Քրոմվելի, Միլթոնի, Հեմփդենի կերպարների վրա (տես *Letters* 2:188):

61 Պարզ չէ, թե այստեղ ինչին է հղում և կամ ինչ է ակնարկում Քարլայլը: Չակերտներն առկա չէին «Ֆրեյզերի հանդես»-ում, որտեղ հոդվածն առաջին անգամ հրատարակվել էր: Դրանք ի հայտ են եկել միայն 1840 թ. «Miscellanies»-ում:

62 Քարլայլի այս դրվագի ամենահավանական սկզբնաղբյուրը Ռոբերտ Հերոնի (1764-1807) «Նամակներ գրականության» (1785) երկն է, որը նա անկասկած կարդացել էր: Արդի հետազոտողները, սակայն, չեն կարողացել բացահայտել Հերոնի աղբյուրը (ամբողջական դրվագը տես *Heron R., Letters of Literature. London, 1785. Reprint, New York: Garland, 1970, էջ 213-216*):

63 Բնագրում **Rumour** (նաև՝ **համբավ**): Վերգիլիոսն իր «Էնեական»-ում համբավը պատկերում է հետևյալ կերպ (հմմտ.). «Վիթխարի է, ահեղ հրեշ – որքան փետուր ունի մարմնին, / Այնքան տակից՝ աչքեր արթուն (անասելի՛ հրաշալիք), / Նույնքան լեզու, խոսող բերան ու նույնքան էլ՝ սրած ականջ (Պուրփուս Վերգիլիոս Մարո, Էնեական, լատիներենից թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գոհար Մուրադյանի և Արամ Թովչյանի**, Եր.,



չեն կապակցված, ինչպես ծնողն ու զավակը: Ամեն մի առանձին իրադարձություն ոչ թե մեկ, այլ նախընթաց և ժամանակակից մյուս բոլոր իրադարձությունների զավակն է և իր հերթին պետք է միավորվի մյուս բոլորի հետ՝ ծնունդ տալու նորին: Այն Գոյության մշտակա, հարագործ Քառան է, որտեղ ձևերը գոյանում են անհամար տարրերից: Եվ այս Քառսը՝ անպարագիր, ինչպես մարդու բնակությունն ու կյանքի տևողությունը, անիմանալի, ինչպես մարդկային հոգին և ճակատագիրը, հենց այն է, ինչ պատմաբանը պետք է պատկերի և գիտականորեն գնահատի, կարելի է ասել, ներհյուսելով այն մի քանի կանգուն երկարությամբ անջատ գծերով: Քանզի ողջ Գործողությունն իր բնույթով ձգվում է լայնությամբ, խորությամբ և երկարությամբ, ասել կուզի՝ հիմնված է Կրքի և Առեղծվածի վրա, եթե քննենք նրա ծագումը, և տարածվում է բոլոր կողմերից՝ կերպափոխելով և կերպափոխված, ինչպես և մոտենում իր կատարումին, ուստի բովանդակ Պատումն իր բնույթով միաչափ է, առաջ է շարժվում մերթ դեպի մեկ, մերթ դեպի հաջորդական կետեր: Արդ, Պատումը **գծային** (linear) է, Գործողությունը՝ **միակուռ** (solid)<sup>69</sup>: Եղբւկ մեր «պատճառների ու հետևանքների» «շղթաներին» կամ շղթայիկներին<sup>70</sup>, որոնց մենք այդքան ջանասիրաբար հետամուտ ենք որոշակի տարիների քանակի և քառակուսի մոդուլների միջով, երբ ամբողջը լայնածիր, խոր անվերջություն է, և յուրաքանչյուր հյուլե «շղթայված» ու միահյուսված է [մյուս] բոլորին: Իսկապես, եթե Պատմությունը փիլիսոփայություն է՝ փորձով ուսուցանող, ապա Պատմությունը շարադրելու ունակ գրողը ցարդ անհայտ մարդ է: Ինքնին փորձը կարիք կունենա Համագիտելիքի (All-knowledge)՝ գրի առնելու Պատմությունը, ինչպես որ Համաիմաստություն (All-wisdom) կպահանջվեր Պատմությունը մեկնող այդօրինակ փիլիսոփայության համար: Լավ կլինի, եթե հասարակ երկրային պատմաբանները մեղմեն այս հավակնությունները, որ առավել հարիր են Ամենագիտությանը (Omniscience), քան մարդկային գիտությանը, և, ձգտելով լոկ կատարված դեպքերի մի որոշ պատկերի, որն ինքնին լավագույն դեպքում խղճուկ մերձեցում կլինի<sup>71</sup>, ընդունված գաղտնիք թող-

69 Քարլայլի պատմատեսության թերևս ամենաառանցքային բանաձևը: Գյոթեին հղած նամակում խոսելով իր գերմանական գրականության նախատեսած պատմության մասին, որի համար էլ «Ի վերայ պատմութեան» հոդվածն ի սկզբանե իբրև ներածական էր հղացվել, Քարլայլը հայտնում էր, որ իր նյութը «խմբավորելու է» որպես «մեկ ամբողջություն»՝ խոյս տալու ավանդական պատմության գծայնությունից (տե՛ս *Letters* 5:106): Այս դիտարկումը նկատելի է նաև «Շիլլերի կյանքը» գրքում (1825), որում Շիլլերի «Նիդեռլանդների ապստամբության» վերաբերյալ Քարլայլը հետևյալ մեկնաբանությունն է անում. «Աշխատանքը կառուցված է ոչ թե ըստ անընդհատական պատումի, այլ բազմությունների տեսքով, որոնք հաջորդաբար ի տես են դրված. երկրորդական փաստերն ու անցքերն ի մի են բերված որևէ հիմնական փաստի շուրջ, որին էլ՝ իբրև կենտրոնական օբյեկտի, առավելապես ուղղված է մեր ուշադրությունը» (*Life of Schiller*, 147): Ըստ գերմանացի արդի հետազոտող Բ. Հերցոգենրաթի՝ Քարլայլն իր այս բանաձևով կանխում էր Հայդեյե Ուայթին (տե՛ս *Time and History in Deleuze and Serres*, Ed. **Bernd Herzogenrath**. Continuum Studies in Continental Philosophy. New York: «Continuum», 2012, N 1, էջ 14):

70 Հղում է 18-րդ դարի այն պատմաբանների մեթոդներին, որոնք պատմական իրադարձությունները դիտում էին իբրև մարդկանց բանական պատասխաններ տեսանելի պատճառներին (տե՛ս **Sartor Resartus**, 1.5.27):

71 Ընկալումը, թե պատմաբանը սոսկ «մոտենում է» պատմական իրականությանը, հաճախեղեպ է Քարլայլի պատմասիրության մեջ: Նա այս գաղափարը կիրառել էր արդեն իր գրաքննադատության մեջ Ռոբերտ Բըրնսիսի նվիրված հոդվածում (1828), որում պնդում է, թե բանաստեղծին գնահատելու «հաճախակի փորձերը» թույլ կտան մեզ



նեն այդ դեպքերի անըմբռնելի իմաստը և կամ առ առավելն ակնածու Հավատով (հույժ տարբեր փիլիսոփայության այդ ուսուցումից) մտորեն Նրա խորհրդավոր նշանների շուրջ, Նրա, որի ուղին Ժամանակի ամենախտորքում է, և որին Պատմությունն իսկապես բացահայտում է, բայց միմիայն բովանդակ Պատմությունը, և Հավիտենության ծիրում հայտնապես կբացահայտի:

Այսօրինակ նկատառումները հիրավի սակավօգուտ կլինեին, եթե դրանք ընդմեջ Պատմության մեր որոնումներում զգոնություն և հարգալիք խոնարհություն ուսուցանելու փոխարեն թուլացնեին մեր հարգանքն այդ որոնումների հանդեպ կամ ետ պահեին մեզ անդուլ կերպով դրանց հետամուտ լինելուց: Եկեք ավելի ու ավելի քննենք Անցյալը, թող բոլոր մարդիկ հետագոտեն այն՝ իբրև գիտելիքի ճշմարիտ աղբյուր, որի լույսի ներքո միայն, գիտակցաբար թե անգիտակցաբար, կարելի է մեկնել կամ կռահել Ներկան ու Ապագան: Չի թեև հանուր իմաստը մեր իմացությունից վեր է, այնուհանդերձ, այդ խորթին Ձեռագրում, որ պատված է անկերպ, անլուծելիորեն խճճված, անհայտ նշանագրերով (ավելին՝ այն **կրկնագիր մագաղաթ** (Palimpsest) է և երբեմնի մարգարեական գրություն է պարունակել, որ ցարդ աղոտ կերպով ընթեռնելի է), որոշ տառեր, որոշ բառեր կարելի է վերծանել, և եթե ոչ ամբողջական մի փիլիսոփայություն, այս ու այնտեղ գործնականում մատչելի մի պարզորոշ ցուցում ի մի բերվի, [ապա] միևնույն ժամանակ հարկ է քաջ գիտակցել, որ մենք ընդամենը մի փոքր մասն ենք վերծանել, որ շատ բան դեռ պետք է մեկնել, և որ Պատմությունն իսկական մարգարեական Ձեռագիր է, և ոչ ոք չի կարող այն հիմնովին մեկնաբանել:

Սակայն պատմաբան-արվեստագործին հարկ է տարբերել պատմաբան-արհեստագործից, քանզի պատմության մեջ էլ, ինչպես որ մյուս բոլոր ասպարեզներում, կան արվեստագործներ և արհեստագործներ՝ մարդիկ, որոնք աշխատում են մի բնագավառում մեքենայաբար՝ առանց Ամբողջի ընկալման<sup>72</sup> և չզգալով, որ այն գոյություն ունի<sup>73</sup>, և մարդիկ, որոնք Ամբողջի գաղափարով են օժտում ու ազնվացնում ամենահամեստ ասպարեզը և ըստ սովորույթի գիտեն, որ Մասնա-

շարունակ մոտենալ նրա ճշմարիտ արժանիքին (տե՛ս *Essays on Literature*, էջ 30): Իսկ 1831 թ. իր «Բնութագրություններ» հոդվածում գրում էր. «Փորձի կատարելությունը, ինչպես և կարծիքի ամբողջականությունը [հարընթաց] մերժեցում են. դրանք անհասանելի են: Շիլլերի խոսքերով «Ճշմարտություն գոյություն չունի. այն մշտապես գոյանում է»» (*Miscellanies*, 3:43): Այս սևեռումը կապող օղակ է նաև «Ի վերայ պատմութեան» հոդվածի և գերմանական գրականության պատմության անավարտ նախագծի միջև, քանզի Գյոթեին հղած իր նամակում Քարլայլը գրում է, որ այդ երկի սկզբնամասում ներկայացնելու է «այն մեթոդի ուրվագիծը, ըստ որի ծավալվելու է Գերմանիայի գրական պատմությունը, որտեղ շատ բան ցարդ լիովին անհայտ է մեզ, և ներկայումս լոկ որոշակի մերժեցում է հնարավոր առ [այդ] Պատմությունը» (*Letters* 5:105): Աշխատության ձեռագրում պատմության այսօրինակ ընկալմանը Քարլայլը հղում է որպես «ելման կետ և մոտավորություն/մերժեցում» (*Carlyle's Unfinished History of German Literature*. Ed. Hill Shine. Lexington: University of Kentucky Press, 1951, p. 12 (այսուհետ *German Literature*):

72 Չի բացառվում ակնարկը աստվածային Օրինակի և նրա բազում նյութական կրկնօրինակների մասին Պատմության ուսմունքին:

73 Ուշագրավ է զուգահեռը ՄԾ Բլոկի դիտարկման հետ. «[...] Պատուհանից բացվող տեսարանից ամեն գիտնական վերցնում է իր բաժինը այնքան էլ չնտահողվելով ամբողջի մասին» (**Բլոկ Մ.**, նշվ. աշխ., էջ 198):

կին սոսկ Ամբողջի մեջ կարող է հիրավի նկատվել<sup>74</sup>: Այս երկուսի գործեակերպան ու պարտականությունները Պատմության վերաբերմամբ միանգամայն տարբեր պետք է լինեն: Հարկավ, ոչ թե որ յուրաքանչյուրն իր չափով իրական արժեք չունի: Հասարակ հողագործը կարող է հերկել իր արտը, և իր գիտելիքով նա օգուտ է ստանում այդ հողից, ցանում համապատասխան հացահատիկը, թեպետ խոր ապարներն ու կենտրոնական կրակներն անձանոթ են նրան: Նրա փոքրիկ ցանքը կախված է աստղային երկնականարից և նավում է բովանդակ անհայտ երկնային տարածություններով, Խոյի ու Կշեռքի միջև<sup>75</sup>: Այդուհանդերձ, այն հասկալալում է պատեհ ժամանակին, և հողագործն ապահով կերպով ամբարում է բերքն իր շտեմարանում: Որպես հողագործ՝ նա անմեղ է այդ վերին հրաշքներն անտեսելու մեջ, սակայն իբրև Մտածող և Բնության հավատարիմ հետազոտող՝ նա սխալ կլիներ: Նույն կերպ է և պատմաբանի պարագայում, որը քննում է Պատմության որոշ ուրույն հայեցակերպ և այս կամ այն հանգամանքների համակցությունից՝ քաղաքական, բարոյական, տնտեսական, ինչպես նաև այն խնդիրներից, որոնք այդ համակցությունը հարուցել է, եզրակացնում է, որ այսպիսի հատկանիշները վերաբերում են մարդկային հասարակությանը, և համանման հանգամանքները միատեսակ արդյունք կտան, որպիսի եզրահանգումն էլ, եթե մնացյալ փորձերը հաստատեն այն, հարկ է ճշմարիտ և գործնականորեն արժեքավոր համարել: Նա, ինչպես նաև արհեստագործը, սխալվում է լոկ այնժամ, երբ համարում է, որ այդ հատկանիշները՝ հայտնաբերված կամ հայտնաբերելի, սպառում են նյութը, և ամեն քայլափոխի չի տեսնում, որ այն անսպառ է:

Սակայն պատճառահետևանքային մտածողների<sup>76</sup> այդ դասը, որոնց համար և ոչ մի հրաշալիք զարմանահրաշ չէ, այլ բոլոր իրողությունները Երկնքում և Երկրում պետք է տրամաբանված ու մեկնաբանված լինեն, և մարդկային կյանքում անգամ Անհայտը, Անվերջավորը **խանդավառություն, սնահավապություն, դարաշրջանի ոգի** (և այդպես շարունակ) բառերի ներքո ձեռք են բերել, այսպես ասած, հանրահաշվական խորհրդանիշ ու ելման արժեք, արդ գրեթե խաղացել է իր դերը եվրոպական մշակույթում և կարող է համարվել, ինչպես որ պետությունների մեծ մասում (նույնիսկ ինքնին Անգլիայում, որտեղ դրանք ամենաուշը կանգ առան), առ վախճան ընթացող: Նա, ով կարդում է Բնության առեղծվածային Գիրքը, ասես թե այն վաճառականի մայր մատյան (Ledger) է, իրավամբ կասկածվում է այդ Գիրքը երբևէ տեսած չլինելու մեջ, այլ

74 Այս ընկալումը հետագայում առանցքային սևեռում էր դառնալու **Աննալների** պատմագիտական դպրոցի ժիրում (տե՛ս **Հովհաննիսյան ՍՅ.**, Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վեմ», Եր., 2011, N 1 (33), էջ 101):

75 Կենդանակերպի նշանները համապատասխանաբար մարտի 20-ից ապրիլի 19-ի և սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 22-ի համար:

76 Նկատի ունի սկեպտիկ փիլիսոփաներ Ջոն Լոքին, Ղեյվիդ Հյունին, Ջեյմս Միլին և Ջերեմի Բենթամին, որոնք ողջ իմացությունն ու գիտելիքը հանգեցնում էին ֆիզիկական պատճառահետևանքային կապերի: Նրանք հակված էին մերժելու նաև կրոնական հավատալիքները իբրև «ներշնչանք» և «սնահավառություն»:

միայն դրա ինչ-որ դպրոցական սեղմագիր, որից (եթե այն իրական Գիրք համարենք) ավելի շատ մոլորություն, քան թե ըմբռնում կրիսի:

Անտարակույս, Պատմության անվերջավոր բնույթի հարաճուն զգացմանը համընթաց է, որ այս օրերին աշխատանքի բաժանման<sup>77</sup> վաղեմի սկզբունքն այդքան լայնորեն կիրառվում է նրա նկատմամբ: Քաղաքական պատմաբանը՝ մի ժամանակ Պատմության գրեթե միակ մշակը, այժմ տարբեր գործակիցներ է գտել, որոնք ջանում են լուսաբանել մարդկային կյանքի մնացյալ կողմերը<sup>78</sup>, որոնցից քաղաքական հանգամանքները (որոնց ներքո Կյանքն ընթացել է), ինչպես վերն ակնարկվեց, լոկ մեկն են այդ կողմերից և թեպետ առաջնայինը, բայց թերևս ոչ կարևորագույնը բազում արտաքին կարգավորումներից: Ավելին՝ ինքնին այս [քաղաքական] պատմաբանից իր ուրույն ասպարեզում նոր և վսեմ բաներ են սկսում ակնկալել: Հնուց անտի նրան չափազանց հաճախ են կշտամբել այն բանի համար, որ նա անհամաչափ հակումով է կենտրոնացել Սենատի շենքերի, մարտադաշտերի, ավելին՝ անգամ արքաների նախասենյակների<sup>79</sup> վրա՝ մոռանալով, որ, հեռու այս տեսարաններից, Մոքի և Գործողության հուժկու ալիքը տակավին առաջ էր շարժվում իր ապշեցուցիչ ընթացքով, ի մեջ խավարի ու պայծառության, և իր հազարավոր հեռակաց հովիտներում Գոյության մի բովանդակ աշխարհ՝ Երջանկության ջերմացնող երկրային արևով կամ առանց դրա և Մրբության մաքրագործող ու նվիրագործող երկնային արևով կամ առանց դրա, ծաղկում ու թռչնում էր՝ անկախ նրանից՝ «պանծալի հաղթանակը»<sup>80</sup> նվանված, թե՛ տանուլ էր տված: Թվում է՝ մոտ է ժամանակը, երբ շատ բաներ պետք է բարեփոխվեն, և նա, ով, արքունիքներից ու ճամբարներից գատ, այլ աշխարհ չի տեսնում և գրում է լոկ այն մասին, թե ինչպես են զինվորները խստա-

77 Այս դրոյսն ուրվագծված է Ադամ Սմիթի «Ազգերի հարստությունը» գրքի (1776) ներածական զխում, ըստ որի՝ արտադրական աշխատանքի բաժանումը մի քանի անհատների միջև կավելացնի արտադրանքի քանակը և այդպիսով առավել արդյունավետ ու շահութաբեր կդարձնի արտադրական գործընթացը:

78 Այն, որ պատմությունը պետք է պարաշի բարեբեր, տնտեսությունը, կրոնը և այլ ընկերային հաստատություններ ի լրումն պատերազմների ու քաղաքական անցքերի, 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի վաղ շրջանում ի հայտ եկած նոր պատմագրության հիմնականգծիկ սևեռումներից էր, հատկապես Գերմանիայում, թեպետ դրա ստղծողը նշարկվում էին արդեն առավել վաղ շրջանի պատմաբանների (օր. Դ. Հյունի) ընկալումներում: Այս սևեռումն առկա էր նաև ժամանակակից պատմագրության խոշոր դեմքերից Քարլայի ժամանակակից ԺՄ Միշլիի պատմասիրության մեջ: «[...] 1837 թ. Միշլեն բացատրում էր Սենտ-Բյովին. «Եթե իմ շարադրանքն ընդգրկեր միայն քաղաքական պատմությունը, եթե ես բնավ հաշվի չառնեի պատմության այլևայլ տարրերը (կրոն, իրավունք, աշխարհագրություն, գրականություն, արվեստ և այլն), իմ ընթացքը բոլորովին ուրիշ կլիներ: Բայց հարկավոր էր մի մեծ կենսաշարժում (mouvement vital), որովհետև բոլոր այդ տարրերը միասին ներծգվում էին պատմության ամբողջականության մեջ»» (Բոկ Մ., նշվ. աշխ., էջ 202): Պատմության այս համալիր ընկալումը հիմնականգծիկ էր **անսպականների** պատմասիրության ծիրում. «Իմ [ՖՄ Բրոդելի - Գ. Ճ.] պատմության հղացքն ընդգրկում է մի համապարփակ պատմագիտական հայեցակարգ, որը համեմված է մարդու մասին բոլոր գիտությունների տվյալներով: Խոսքն այն մասին չէ, որ ընտրես դրանցից մեկը՝ «հետը պակասարդվելու համար», այլ այն, որ ասարես մարդու մասին բոլոր գիտությունների հետ «բազմակնության հարաբերություններով» (մեջբերումը ըստ **Ստեփանյան Ա., Մարգարյան Ե.**, ժամանակի կառույց ֆ. Բրոդելի պատմասիրության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., «Ձանգակ-97», 2005, N 1-2, էջ 41, ծնթ. 15):

79 Հմնտ. «[...] Իր բողոքի ծայրը, սակայն, XVIII դարն արդեն վաղուց էր բարձրացրել: Կոլտերը գրում էր. «Ասես տասնչորս հարյուրամյակ ի վեր Գալիայում միայն թագավորներ, մինիստրներ և գեներալներ եղած լինեն»» (Բոկ Մ., նշվ. աշխ., էջ 227):

80 Հմնտ. Ռոբերտ Սաուրի, «Բլենհայմի ճակատամարտը» (1798). “But what good came of it at last?” / Quoth little Peterkin. / “Why that I cannot tell,” said he; “But ’twas a famous victory” (stanza 11):

վարժվել ու գնդակահարվել, և թե ինչպես է մի իշխանական անպարարը գերազանցել մյուսին և այնուհետ վարել կամ առնվազն պահել է այն, ինչ նա կառավարման դեկ է կոչել, բայց որն ավելի շուտ տակառի հարկման խցանն<sup>81</sup> էր, որի միջոցով, դեկավարման փոխարեն, նա կարող էր տակառը բանալ և որքան ճարպկորեն, այնքան մոտ նստվածքին, փոքրիշատե ուսանելի լրագրող<sup>82</sup> կհամարվի, բայց այլևս պատմաբան չի կոչվի:

Բայց և այնպես, քաղաքական պատմաբանը, եթե նրա աշխատանքն արված լինի հնարավոր ամենայն կատարելությամբ, կարող է գործի միայն մի մասը անել՝ տակավին տեղ թողնելով բազմաթիվ արհեստակիցների համար: Մրանցից առաջինը եկեղեցական պատմաբանն է, որը կաթոլիկական կամ այլադավան դիտանկյունից փորձում է քննել Եկեղեցու զարգացումը, հասարակական հաստատությունների այն հատվածը, որը վերաբերում է մեր կրոնական կացությանը, ինչպես որ մյուս բաժինը՝ մեր քաղաքացիականին կամ երկարատև հեռանկարում նույնիսկ մեր տնտեսական դրությանը: Ճիշտ կազմակերպման պարագայում այս բաժինը երկուսից առավել կարևորն է, քանզի մեզ ավելի շատ մտահոգում է հասկանալը, թե ինչպես է մարդու բարոյական բարօրությունն առաջ ընթացել և թե ինչպես կարող է ընթանալ, քան նման կերպով նրա ֆիզիկական բարեկեցությունը հասկանալը, որն ի վերջո բոլոր քաղաքական կարգավորումների նպատակն է: Չի ֆիզիկապես ամենաերջանիկն ուղղակիորեն ամենաբարեկեցիկն է, ամենաուժեղը, և կառավարման բոլոր պայմաններում Իշխանությունը (լինի այն հարստության, ինչպես այս օրերին, թե սպառազինության ու դաշնակիցների, ինչպես հնում) Բարիքի միակ արտաքին խորհրդանիշն ու գնադրամն (purchase-money) է: Ճշմարիտ Բարիքը, սակայն, եթե հաճույքը նրա հոմանիշը չենք համարում, կարելի է ասել, հազվադեպ կամ, ավելի ճիշտ, երբեք վաճառքի չի հանվում շուկայում, որտեղ այդ դրամը շրջանառվում է: Այնպես որ, ի շահ մարդու ճշմարիտ առավելության, նրա կյանքի ոչ թե արտաքին, այլ ներքին ու հոգևոր կացությունն<sup>83</sup> է, որ առաջնային ազդեցություն ունի, ոչ թե կառավարման վարչաձևը, որի ներքո նա ապրում է և կարող է իշխանություն կուտակել այնտեղ, այլ Եկեղեցին, որին նա անդամակից է, և բարոյական բարձունքի այն աստիճանը, որին նա կարող է հասնել Եկեղեցու ուսուցմամբ: Հետևապես եկեղեցու պատմությունը, եթե այն իմաստնաբար խոսի, հույժ կարևոր գաղտնիքներ կուտուցանի մեզ, ավելին՝ իր բարձրագույն դրսևորմամբ այն մի յուրատեսակ շարունակվող Մուրբ գիրք կլինի: Մեր սրբազան գրքերը, արդարև, լոկ նախաստեղծ Եկեղեցու պատմությունն են, քանզի այն ամենից առաջ մարդու հոգում է ծագել և

81 Գինու հարկատեսակ Անգլիայում (տե՛ս A History of Taxation and Taxes in England, Vols. 1-4. Ed. **Stephen Dowell**. London & New York: Routledge, 2013, Vol. 1, էջ 213): Քարլայն այստեղ հեզմանքի է դիմում:

82 Բնագրում **Gazetteer**: 18-րդ դարում և Կիկտորիանական Անգլիայում **լրագրող** բնորոշումը հաճախ նվաստական (pejorative) իմաստ ուներ, և Քարլայն այն կիրառում է հեզմական նշանակությամբ:

83 Հմնտ. «[...] Մարդկության ժամանակաշրջաններին այլևս երանգ ու հնչողություն են հաղորդում մարդկային ոգու նրբագույն դրսևորումները՝ իրենց փոփոխական զարգացումներով» (**Գրոկ Մ.**, նշվ. աշխ., էջ 229):

խորհրդանշական կերպով մարմին առել նրա արտաքին կյանքում: Թե որքան հեռու են Եկեղեցու մեր ներկայիս պատմաբաններն այդօրինակ անհասանելի չափանիշներից, անգամ միանգամայն հասանելի մոտավորություններից առ այդ, հարկ չկա մատնանշելու: Եկեղեցական պատմաբանից մենք պետք է գանգատվենք (ինչպես որ նրա քաղաքական արհեստակցից դժգոհեցինք), [քանի] որ նրա հետազոտություններն ավելի շատ արտաքին մեխանիզմին են ուղղված, առարկայի սոսկ կմախքին և մակերեսային-պատահական հատկություններին, քան ինքնին առարկային: Կարծես Եկեղեցին եպիսկոպոսների ժողովատունների, տիեզերական խորհրդաժողովների ու կարդինալների պապրնտիր ժողովների<sup>84</sup> մեջ է և ոչ ավելի շատ հավատավոր մարդկանց սրտերում<sup>85</sup>, որոնց վարքի ու խոսքի մեջ էլ (որպես դրանցով ազդեցություն գործած) հարկ է որոնել Եկեղեցու վերին դրսևորումները և պարզել նրա առաջընթացի կամ անկման [պատճառները]: Եկեղեցու պատմությունն ինչպես անտեսանելի, այնպես էլ տեսանելի Եկեղեցու պատմությունն է, որոնցից վերջինը, եթե զատենք առաջինից, լոկ դատարկ շինություն կլինի՝ գուցե և ոսկեգօծված և հնամենի ուխտանվեր ընծաներով պատված, սակայն անօգուտ և անգամ սպականորեն անվայել, որի պատմությունը գրելը նվազ կարևոր է, քան դրա անկմանը նպաստելը:

Պակաս հավակնոտ բնույթ են կրում այն պատմությունները, որոնք առնչվում են մարդկային գործունեության առանձին հատուկ ոլորտներին՝ գիտություններին, կիրառական արվեստներին, հիմնարկություններին և այսպես շարունակ, ոլորտներ, որոնք մարդու բովանդակ հետաքրքրության և կենսակերպի ամփոփում չեն ենթադրում, բայց որտեղ (թեպետ ամեն մեկը տակավին կապված է բոլորի հետ) յուրաքանչյուրի ոգի, առնվազն նրա նյութական արդյունքները, որոշ չափով կարող է զարգանալ առանց մյուսների ոգու հետ այդքան խիստ հարաբերակցության: Այս խորագրի ներքո դիրքով և բարդությամբ ամենաբարձրը փիլիսոփայության, իր կյանքի էության մասին մարդու հայացքների ու տեսությունների մեր պատմությունները կլինեն և տեսանելի ու անտեսանելի տիեզերքի հետ նրա փոխհարաբերությունները, որպիսի պատմությունն էլ, արդարև, եթե այն ըստ պատշաճի քննվի և կամ պատշաճի ճշմարիտ քննությանը, Եկեղեցու պատմության բնագավառ կլինի, դրա տրամաբանական կամ դավանաբանական ոլորտը, քանզի փիլիսոփայությունը, իր բուն իմաստով, հոգին է, որի մարմինն էլ է կամ պետք է լինի կրոնը կամ պաշտամունքը. իրերի խելամիտ դրության պարագայում փիլիսոփան և քահանան նույնական են: Սակայն փիլիսոփայությունն ինքնին բավականաչափ հեռու է այս դերն ստանձնելուց, և ոչ էլ

84 Վայրեր, որտեղ եկեղեցական իշխանությունները վճիռներ են կայացնում: Եպիսկոպոսների ժողովատունն անգլիական եկեղեցուն որպես տաճարային ժողովատեղի է ծառայում: Տիեզերական խորհրդաժողովը քրիստոնեական եկեղեցու բոլոր առաջնորդների համաժողովն է, իսկ կարդինալների առանձնաժողովում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու կարդինալները նոր պապ են ընտրում:

85 Հմմտ. «[...] Որքան ուսանելի կլիներ, եթե մեզ հաջողվեր ականջալուր լինել խոնարհների շուրթերից ելնող իսկական արդթքին...» (Գրկ Մ., նշվ. աշխ., էջ 215):

փիլիսոփայության պատմաբաններն են ընդհանուր առմամբ այնպիսիք, որ կարողանան նվազագույն չափով մոտեցնել փիլիսոփայությունն այդ դերին: Հազիվ թե մոգերի ու դրուիդների<sup>86</sup> վայրի դարաշրջանից ի վեր քահանայի ու փիլիսոփայի այդ խելամիտ նույնացումը տեղի ունեցած լինի որևէ երկրում, այլ փոխարենը աստվածային երևույթների պաշտամունքը և դրանց գիտական հետազոտությունը միանգամայն տարբեր ձեռքերում են եղել, նրանց հարաբերություններն էլ՝ ոչ թե բարեկամական, այլ թշնամական: Եվ ոչ էլ բրուքերներն<sup>87</sup> ու բուլենները<sup>88</sup> (էլ չասած բազում դժբախտ էնֆիլդների<sup>89</sup> մասին, որոնք այդ վերջին ոլորտից էին)՝ ավելին, քան անօգուտ տեղեկատուներ, շարադրված ուսմունքի հաճախ անխելք և անհասկանալի տեղեկատուներ՝ անգոր բացահայտելու, թե ինչպես էր ուսմունքը ծագել, կամ ինչ ուղերձ էր այն պարունակում իր ժամանակի և երկրի, մարդկության հոգևոր կացության համար: Ավելին՝ նման խնդիր՝ իբրև մի բան, որ հարկ էր փորձել, թերևս դրված էլ չէր նրանց առջև:

Արվեստն ու գրականությունը և սերտորեն ազուցված են կրոնին՝ իբրև մի տեսակ արտաքին ամրություններ ու հենահիմքեր (abutments), որոնցով մեր ներաշխարհի այդ բարձրագույն զագաթն աստիճանաբար համաբերվում է ընդհանուր մակարդակին և դրանով մատչելի դառնում: Նա, ով պոեզիայի պատշաճ պատմություն կգրի<sup>90</sup>, կպատկերի մեզ համար այն հաջորդական Հայտնությունները, որ մարդը ձեռք է բերել Բնության ոգու մասին, որպիսի դիտանկյուններից էլ նա որսացել և փորձել էր որոշ կերպարանք հաղորդել այդ անպատմելի Գեղեցկությանը, որն իր բարձրագույն պարզության մեջ կրոն է, մարգարեի ներշնչանքը, սակայն այս կամ այն չափով պետք է ոգեշնչեր նաև յուրաքանչյուր ճշմարիտ Բանաստեղծի, եթե նրա խնդրո առարկան երբեք այդքան համեստ չլիներ: Մենք պետք է հասկանանք, թե ինչ քայլերով են մարդիկ Տաճար բարձրացել, որքան սերտ են նրանք մոտեցել, ինչ ձախորդ դիպվածով են տևական ժամանակով երես դարձրել նրանից և դիտապաստ ընկել մարտադաշտում՝ առանց օդում հնչող երաժշտության, և կամ կուրորեն պայքար մղել այլ բարձունքների համար: Որ

86 Հին Իրանի և Բրիտանիայի կրոնական առաջնորդ-իմաստուներ: Համեմատությունը գալիս է թերևս Դիոգենես Լաերտիուսից, որը դրուիդներին անվանում էր «պարսիկների մոգեր»:  
 87 **Յոհան Յակոբ Բրուքեր (1696-1770)**, գերմանացի փիլիսոփա, «Փիլիսոփայության քննական պատմություն» (1742-1744) հնգահատոր աշխատության հեղինակը:  
 88 **Յոհան Գոթլիբ Բուլեն (1763-1821)**, գերմանացի փիլիսոփա, «Նոր փիլիսոփայության պատմություն» (1800-1804) վեցհատորյա աշխատության հեղինակը:  
 89 **Ուիլյամ էնֆիլդ (1741-1797)**, բրիտանացի ունիթորական (Unitarian) քահանա: Անգլերեն է թարգմանել Բրուքերի վերոնշյալ երկը՝ որպես «Փիլիսոփայության պատմություն» (1791): 1822 թ. փետրվարի 4-ին Ջեյմս Ջոնսթոնին իղձ նամակում Քարլայլի մեկնաբանությունից պարզ է դառնում, թե ինչու է նա Ու. էնֆիլդին դժբախտ անվանում. «Առողջ նյարդային համակարգում ավելի շատ երջանկություն, անգամ ավելի շատ փիլիսոփայություն կա, քան Բրուքերի կամ Բուլենի պատկերած բոլոր համակարգերում» (Letters 2:29, տե՛ս նաև 1:198): Քարլայլը, ըստ ամենայնի, ակնարկում է Ու. էնֆիլդի ջանադիր աշխատանքը Բրուքերի բազմահատոր երկը թարգմանելիս:  
 90 Սույն պարբերությունն արտացոլում է այն փաստը, որ այս հոդվածը գրվել է Քարլայլի գրականության պատմություն հեղինակելու կապակցությամբ: Ի լրումն հոդվածի Քարլայլը հակիրճ ակնարկ էր գրել «գրականության» (որը նա «պոեզիային» համազոր էր դիտում) բնույթի և գերմանական գրականության պատմության գրության կերպի մասին (տե՛ս German Literature 1-13, տե՛ս նաև Letters 5:105):

մեր բոլոր այխտորոնների<sup>91</sup> ու ուրոթոնների<sup>92</sup> մեջ այսպիսի պատմաբան չկա, չափից դուրս պարզ պետք է լինի յուրաքանչյուրի համար: Բայց և այնպես, եկե՛ք չվհասովենք դեպի այդ կատարելություն առավել սերտ մերձեցումներից: Ամենից առաջ եկե՛ք միշտ աչքի առջև ունենանք դրա Տիպարը (Ideal), քանզի հենց այդպիսով միայն դրան հասնելու հնարավորություն ունենք:

Օրենքների և սահմանադրությունների մեր պատմությունները, որոնցում բազում մոնտեսքյոներ<sup>93</sup> ու հալեմներ<sup>94</sup> են իրենց աշխատանքով ճանաչում գտել, շատ ավելի պարզ են, սակայն հիմնովին քննելու դեպքում՝ բավականաչափ խորունկ և օգտակար՝ վավերական լինելու պարագայում (թեկուզև պակաս խորունկ): Այդժամ մենք կունենանք բժշկության, մաթեմատիկայի, աստղագիտության, առևտրի, ասպետության, վանականության պատմություններ<sup>95</sup>, իսկ գոգեներն<sup>96</sup> ու բեքմաններն<sup>97</sup> էլ թերևս բոլորից ամենաշռայլ ավանդը բերեցին՝ գյուտերի պատմությունը<sup>98</sup>: Այս բոլոր տարակարգերի և այստեղ չթվարկված շատ ուրիշների՝ դեռևս չհնարված և չկիրառված, արժանիքն ու պատշաճ սխեման թերևս բացատրության կարիք չունեն:

Այսպիսով, թեև ինչպես վերը նշվեց, բովանդակ Գործողությունը ձգվում է երեք ուղղությամբ, և մարդկային գործողությունների հանրագումարը մի ամբողջ տիեզերք է՝ իր բոլոր սահմաններով անհայտ, Պատմությունը, զանազան ուղղություններով և հատման կետերով շավիղ առ շավիղ սխեմայով Անանցանելիի

91 **Յոհան Գոթֆրիդ Այխորն (1752-1827)**, գերմանացի բողոքական աստվածաբան և արևելագետ, «Գրականության պատմությունն ակունքներից մինչև նորագույն ժամանակները» (1805-1813) վեցհատորյա աշխատության հեղինակը: Իր «Գերմանական գրականության կառուցումը» (1827) հոդվածում Քարլայլը նրան պիտակել էր իբրև «հույժ բռնագրոս» (Miscellanies 1:27) և երբ ձեռնարկել էր գերմանական գրականության պատմության մասին իր երկը 1829 թ. վերջին, պնդում էր, որ այն «այխորոնյան տիպի մանրակրկիտ ժամանակագրական շարադրանք չի լինելու, այլ ներկայացնելու է այդ վիթխարի թեմայի լեզբմանական գրականության - Գ. Ը.՝ առավել երևելի և, այսպես ասած, ունիվերսալ հատկանիշները» (Letters 5:59):

92 **Թոմաս Ուոթսոն Կրոտեր (1728-1790)**, անգլիացի գրաքննադատ, բանաստեղծ, հեղինակել է «Անգլիական պոեզիայի պատմություն» եռահատոր կոթողային աշխատությունը (1774-1781): Իր «Նորատետրերը»-ում Քարլայլը գրում է, որ Ուոթսոնի այդ երկը լույս «օժանդակ յուր է ծառայելու լեզբմանական գրականության իր պատմության համար - Գ. Ը.՝, բայց ոչ իբրև չափանիշ» (Note Books 119-120):

93 **Շառլ Լուի դը Մոնտեսքյո (1689-1755)**, ֆրանսիացի փիլիսոփա, իրավագետ, «Օրենքների ոգին» (1748) և «Պատողություններ հռոմեացիների մեծության և անկման պատճառների մասին» (1734) երկերի հեղինակը: Ղեռնա 1820 թ. Քարլայլը Մոնտեսքյոյի մասին հոդված էր գրել «**Եղիներուց հանրագիտարան**»-ի համար (The Edinburgh Encyclopaedia. Ed. David Brewster. 18 vols. Edinburgh: Blackwood, 1830, 14:662-663):

94 **Հենրի Հալեմ (1777-1859)**, անգլիացի պատմաբան, «Անգլիայի սահմանադրական պատմություն» (1827) աշխատության հեղինակը: Իր եղբորը հղած նամակներից մեկում Քարլայլը նրան խորհուրդ էր տալիս «զուլխ չդնելու» Հալեմի հետ (տե՛ս Letters 2:137):

95 Քարլայլը թերևս նկատի ունի այն պատմությունները, որոնք կամ որոնց մասին նա կարդացել էր (ամբողջական ցանկի համար տե՛ս «Historical Essays, էջ 461):

96 **Անտուան-Իվ Գոգե (1716-1758)**, ֆրանսիացի իրավագետ, պատմաբան, «Օրենքների, արվեստների, գիտությունների ծագումը և դրանց առաջընթացը հնագույն ժողովուրդների շրջանում» (1758) եռահատոր աշխատության հեղինակը:

97 **Յոհան Բեքման (1739-1811)**, գերմանացի գիտնական, հնարել է «ստեխնոլոգիա» եզրը, «Անհարկներ գյուտերի պատմության» (1780-1805) հնգահատոր աշխատության հեղինակը:

98 Գյուտերի պատմության վրա Քարլայլի շեշտադրումը համարժեք է նրա «պատմությունն իբրև մտքի պատմություն» ընկալմանը: «Sartor Resartus»-ում տպագրահաստոցի և շոգեմեքենայի գյուտերը Քարլայլը ներկայացնում է իբրև օրինակներ, թե ինչպես է միտքը պատմություն կերտում (1.5.30; 2.4.91-92): Հմտ. նաև Ռ. Զ. Քոլինգվուդի պատմասիրության հիմնադրույթի հետ՝ «Ողջ պատմությունը մտքի պատմություն է» (Van der Dussen W. J., History as a Science: The Philosophy of R. G. Collingwood. Martinus Nijhoff: The Hague, 1981, p. 81):

միջով, փորձում է Ամբողջի հանդեպ որոշ հսկողություն ապահովել մեզ համար: Եվ եթե ամեն պատմաբան մի լավ իր<sup>99</sup> շուրջը նայի իր հետագծից՝ քննելով այն ոչ թե **քթով**, ինչպես հաճախ է պատահում, այլ **աչքով**, գուցե ի վերջո համակ չճախողի այդ փորձը: Միայն թե աղոթելով, որ աշխատանքի հարաճուն բաժանումն այստեղ և այլուր չխորացնի մեր առանց այդ էլ ուժգին մեխանիկական հակումները, և որպեսզի մասնավորի հանդեպ ձեռքի ճարտարություն բանեցնելով չկորցնենք իշխանությունն ամբողջի նկատմամբ, և Պատմության որևէ փիլիսոփայության հույսն ավելի հեռու չլինի, քան երբևէ, եկե՛ք բոլորս ավելի ու ավելի մեծ հաջողություն մաղթենք նրան:

\*\*\*

Հոդվածի այս հակիրճանքը (summary) կազմվել է Թ. Քարլայլի անմիջական մասնակցությամբ 1857 թ. «Uniform Edition»-ի համար:

## Հակիրճանք

### Ի ՎԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Պատմությունը մարդկային մտածողության ամենավաղ և պարզագույն արտահայտությունն է: Քանզի մենք ընդամենը ներկայացնում ենք Պատմությունը, նմանապես և ավելին չենք ասում, քան միայն պատմում ենք այն: Անտիկ և արդի պատմաբաններ: Բոլոր հավակնոտ «պատմության փիլիսոփայություններին» ունայնությունը: Նախքան փիլիսոփայությունը փորձով կուսուցանի, այն պետք է ի սկզբանե իմանա՝ ինչպես անել դա, և ամենից առաջ պարզորոշ կերպով գրի առնի փորձը: Կյանքի փորձը կազմող ամենապարզ փաստերի անսահման խորթությունը: Մարդկության կենդանի, բուն պատմությունը բաղկացած է միանգամայն այլ և առավել բեղուն անցուդարձերից, քան որ վկայված են պատմության գրքերում: -Արժեքավոր և անարժեք պատմական վկայություններ. Տեսանողը և հասարակ ականատեսները: Անխուսափելի հակասություն «հաջորդական դեպքերի» լոկ գծային Պատումի և անցուդարձերի բուն, անվերջորեն կապակցված Ամբողջության միջև, որի ամենօրյա արձանագրումը միայն կարող է լիակատար Պատմություն կազմել: Լավ կլինի, որ հասարակ երկրային պատմաբանները մեղմեն առ փիլիսոփայություն իրենց հավակնությունները և ձգտեն լոկ կատարված դեպքերի որոշ արժանահավատ պատկերի: Պատմաբան-ար-

99 Այստեղ առկա է ուշագրավ մի իրողություն, որը հայերենում չի փոխանցվում: Քարլայլը տարբերակում է արական սեռի «պատմաբան»-ը իգական սեռի «պատմություն»-ից, ինչն անսովոր է անգլերենում: Ուստի և առաջինի դեպքում նախադասության մեջ կիրառում է **he (his)**, իսկ երկրորդի պարագայում **she (her)** դերանունները: Սա առաջ էր բերել նաև գրաշարի շփոթմունքը, որը 1830 թ. առաջին հրատարակության ժամանակ վրիպակ էր համարել այս տարբերակումը և շտկել այն: Սակայն 1840 թ. հողվածը լրամշակելիս Քարլայլը վերականգնել է այդ տարբերակումը:



վեստագործ և պատմաբան-արհեստագործ: Պատմության անվերջավոր բնույթի հարաճուն զգացումը: Աշխատանքի բաժանում. քաղաքական և եկեղեցական պատմաբան: Եկեղեցու պատմությունը, եթե այն իմաստաբար խոսի, հույժ կարևոր գաղտնիքներ կուսուցանի: Նվազ հավակնոտ պատմություններ: Քահանայի և փիլիսոփայի վաղեմի խելամիտ նույնացումը: Պատմական տիպարներ. ազնիվ ըմբռնումի անհրաժեշտությունը:

\*\*\*

**Գևորգ Ա. Ճաղարյան** - գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատմության տեսության և փիլիսոփայության, 18-19-րդ դդ. եվրոպական պատմագրության և քաղաքական իմաստասիրության, պատմության և արվեստի աղերսների հիմնախնդիրները:

Էլեկտրոնային հասցե՝ georgeworldhistory@gmail.com

Summary

## THOMAS CARLYLE AND HIS ESSAY “ON HISTORY”

Gevorg A. Tshagharian

**Key words** - Victorian era, Thomas Carlyle, historical science, **Prussian** school of history, W. Scott, G. W. F. Hegel, J. Michelet, **Romantic** historiography, German **Romanticism**, **Enlightenment** historiography, a view of the past, historical sense.

The article examines the historical perceptions of Scottish thinker and writer Thomas Carlyle (1795-1881) in the light of the emergent historiographical concepts of the era. Herein, it reappraises, in typological manner, the author's peculiar contribution to the European historiography and humanities of the 19<sup>th</sup> century, entirely free from the radical-ideological colourings. An attempt is made to observe Carlyle's comprehension of the past on the background of the further metamorphoses of historical thought. With this end in view, the translation and scrupulous annotations of Carlyle's essay “On History” (1830) are tended to provide insights into the apprehension of the author's historical conception.

Thomas Carlyle's first essay on history presents some of his innovative approaches on the activity which was to engage him from the 1830s onward. It maintains that the recording of history is one of the activities which defines us as human beings; that history must involve society and other provinces of thought as a

whole, and not be restricted to chronicles of historiographers or annalists; that history in all its inscrutable mystery can never be thoroughly apprehended. The essay also presents Carlyle's pioneering distinctions between, on the one hand, narrative and action and between the **artisan** and the *artist*, on the other. Carlyle challenges the notion that history is "Philosophy teaching by Experience" and argues that because "History is the essence of innumerable Biographies", neither the recording of historical experience, nor the drawing of philosophical truths from that experience is an easy task. Carlyle suggests that the historian should approach history not with the theoretical aspirations of philosophy but with the eye of faith, which recognizes the infinite mystery in History.

There is, Carlyle argues, "a fatal discrepancy between our manner of observing" events "and their manner of occurring". While man inevitably conceive of history as a "Narrative" (a "successive" series of events), it is in reality an "Action" (a "simultaneous" group of events, related to each other not just by linearity but by "breadth" and "depth", "Passion and Mystery"). The historian best able to embody the "Action" of history is not the "Artisan", who works mechanically with discrete phenomena, but the "Artist", who works with a sense of the organic whole.

Резюме

## ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «ОБ ИСТОРИИ»

Геворк А. Тшагарян

**Ключевые слова** - Викторианская эпоха, Томас Карлейль, историческая наука, Прусская школа, В. Скотт, Г. В. Ф. Гегель, Ж. Мишле, романтическая историография, немецкий романтизм, просветительская историография, обозрение прошлого, историческое чувство.

В статье рассматриваются исторические воззрения Томаса Карлейля (1795-1881) в свете зарождающихся историографических концепций эпохи. Типологически переосмысливается своеобразный вклад автора, свободного от радикальных идеологических окрасок, в европейскую историографию и гуманитарные науки XIX века. Предпринята попытка проследить историософическую систему Карлейля и его видение прошлого на фоне дальнейших метаморфоз исторического мышления. С этой целью перевод и подробные

комментарии к эссе Карлейля «Об истории» (1830) дают представление об исторической концепции автора.

В первом очерке Томаса Карлейля по истории представлены его новаторские рассуждения о деятельности, которой ему предстояло заниматься с 1830-х гг. В эссе автора утверждается, что история является одним из видов деятельности, определяющих нас как человеческих особей; что история должна охватывать общество и другие сферы мысли всецело, а не ограничиваться хрониками историографов или летописцев; что история во всей ее непостижимой тайне никогда не может быть полностью постигнута. В эссе также приводятся примечательные различия, проведенные Карлейлем между повествованием и действием, а также между **ремесленником** и **художником** в историописании. Карлейль оспаривает идею о том, что «История — это философия в примерах», и заявляет, что поскольку «История - это сущность бесчисленных биографий», то ни констатирование исторического опыта, ни извлечение философских истин из этого опыта не являются легкой задачей. Карлейль предполагает, что историк должен подходить к постижению истории не с теоретическими устремлениями философии, а взирая оком веры, которая признает необозримую тайну истории.

Существует, утверждает Карлейль, «неизбежное несоответствие между нашим способом наблюдения» событий «и их способом возникновения». Хотя человек воспринимает историю исключительно как «Повествование» («последовательный» ряд событий), но на самом деле история есть «Действие» (скопление «одновременных» событий, связанных друг с другом не только линейностью, но и «широтой» и «глубиной», «Страстью и Тайной»). Историк, способный лучше всего воплотить «Действие» истории, это не «Ремесленник», который механически работает с дискретными явлениями, а «Художник», который работает с чувством органического целого.

## REFERENCES

1. **Blok M.**, Patmut'yan pashpanakan, kam patmabani arhestë, frans. t'argm.' **Sh. Makaryani**, khmb.' **S. Hovhannisyán**, Yer., "Sargis Khach'ents' • P'rint'info • Antares", 2018 (In Armenian).
2. **Hovhannisyán S.**, Fernan Brodeli patmut'yan tesut'yunë, "Vëm", Yer., 2011, N 1 (33) (In Armenian).
3. **Step'anyan A., Margaryan Ye.**, Zhamanaki karuyts'ë F. Brodeli patmahayets'oghut'yan tsirum, "Patmut'yun yev krt'ut'yun", Yer., "Zangak-97", 2005, N 1-2 (In Armenian).